



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

## ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. ՕՏԱՐ ՓԱՐԱԽԸ

1. ԻՆՉՈՒՒ ԱՅՍ ԷՋԵՐԸ



Եղբւ կա՛ր անգամ մը ևս գրելու Օրմանյանի մասին, երբ ահա կես դար է դեղեր սկսան կազմել իր մասին գրվածները, և երբ ինքն իսկ իր կյանքը լրիվ պատմած է «Ազգապատում»-ին կամ «Խոճք և խոսք»-ին մեջ: Այս հարցումն է, որ մարդկուղի ինքը իրեն, երբ սեղանին առջև կանցնի քանի մը էջ գրելու համար մարդու մը մասին, որ քառասուն տարի է հոգը մտած է արդեն բացառիկ դեր մը կատարելու հետո հայ կյանքի մեջ, և ստեղծելու հետո քրննադատներու ինչպես և պաշտպաններու, թշնամիներու և նաև հիացողներու հսկա բանակ մը:

Արդարեւ, Օրմանյան շատ է խոսած իր մասին իր զանազան երկերուն մեջ: «Ազգապատում»-ի մեջ պատմագիր Օրմանյանը հաճախ կանդորդառնա ինքն իր մասին ալ՝ իր կյանքի հանգրվաններուն նվիրելով ուրույն գլուխներ, իսկ շատ ավելի լայն տեղ տալով պատրիարք Օրմանյանին և նաև աւոնց, որոնք անոր հետ գործեցին:

Իսկ «Խոճք և խոսք»-ը ուրիշ բան չէ, բայց եթե իր հուսկ ակնարկը փոթորիկներով ու աղմուկով լեցուն իր կյանքին վրա, իր մտածումները դեպքերուն մասին, որոնց մեջն անցավ ան ու մարդոց մասին, որոնց հետ շփում ունեցավ:

Առաջին ակնարկով՝ այս երկու գրքերը պիտի բավեն արդեն, որ լրիվ ճանշնայիր մարդը, զոր կփորձես կենսագրել:

Իր այս երկու գրքերու կողքին՝ իր գործունեության եթե ոչ ամենեն բեղմնավոր, գոնե ամենեն հրատապ շրջանին մասին մեծ լույս պիտի սփռեր իր պատրիարքության տասներկու տարիներու պատմությունը ևս: Այդ պատմությունը շարադրած էր ինքը, ու տպագրել իսկ տված: Չենք գիտեր ինչու՞ ան լույս աշխարհ չեկավ ցարդ: Բարեբախտաբար անկե հաճախ քաղվածքներ կրնն «Ազգապատում»-ին մեջ՝ իր պատրիարքության շրջանին մասին խոսած ատենը, և անոր բովանդակությունը, հետևաբար, մեծ շահով գիտենք:

Իր կյանքի և գործունեության մասին իր իսկ հայթայթած տվյալները կամբողջանան այն մանրամասն տեղեկագրով, որուն մեջ ան պարզեր էր իր պատրիարքության շրջանի հաշվական գործառնությունները, ոչ մեկ մութ կետ չձգելով այսպես իր կյանքի 77 տարիներուն և շուրջ վաթսուն տարիներու իր հանրային գործունեության շուրջ:

Այնպես որ, մեկը եթե ուզե Օրմանյանի կյանքին հետևիլ՝ շատ ալ դժվարություն չի քաշեր. Օրմանյան ինքն իսկ քեզ կառաջնորդե իր կյանքի հանգրվաններուն: Այսպիսով կենսագրին ուրիշ բան չի մնար, բայց եթե քայլ առ քայլ հետևիլ անոր, ու իրմե ետք քաղել նոթերը՝ զորս գտնելու համար պետք է այլապես շատ շարժարկեր:

Ասկե զատ, ժամանակակից մամուլը առատ նյութ կուտա քեզի: Ըլլա պատրիարքության իր շրջանին և ըլլա անոր հաջորդող



տարիներու թերթերը, Պոլսո թե Կովկասի և արտասահմանի մեջ՝ լեցուն են իր մասին թեր ու դեմ հոգվածներով։ Ավելցուցեք ասոնց վրա պարսավատեսորերը, որոնք լույս տեսան իր դեմ, և գրքույկները, որոնք հրապարակ ելան իր համակիրներուն կողմն՝ հարձակումներու դեմ պաշտպանելու

նշմար անցնիլ, ու հաճախ ալ շահարուցանել բացառիկ աղմուկ՝ մանավանդ իր կյանքի որոշ շրջաններուն։ Այնպես որ շատ ալ բնական էր հրատարակութեանց հեղեղը, որ երբեմն ողողեց հրապարակը ասկի շուրջ կես դար առաջ, հրատարակութեաններ, որոնք



ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

համար զայն, և դուք կունենաք արդեն հսկա գրականութիւն մը ձեր առջև։

Կտեսնվի ուրեմն, որ թուղթ ու մեղան սպառել տված է Օրմանյան իր մասին։ Բացառիկ դեպքերը, որոնց հետ կապվեցան իր կյանքն ու գործունեութիւնը՝ չէին կրնար ան-

լեցուն էին կրթով՝ ըլլա իրենց հարձակումներուն, ըլլա իրենց գովեստներուն մեջ։

Հետեաբար, պահ մը պիտի շփոթիս հակասական նյութերուն առջև, զորս թերթերը և գրքույկները առջևդ կ'իռեն։ Անոնք լույս տեսած են պահու մը, երբ հայ կյանքը



բռնկած էր ներքին վեճերով, բսենք նաև կըրբով ու փոխադարձ ատելությամբ, և այդ կիրքն ու փոխադարձ սերը չէին կըրնար արձագանք գտած չլլալ այդ տպված նյութերուն մեջ, որովհետև դեռ մարդիկ ի վիճակի չէին պաղարյուն ու անկողմնակալ ըլլալ դատելու ատեն մարդ մը, որ Թուրքիո Հայոց Պատրիարքութիւնն էր վարէր ամենէն շինդակ շրջանի մը:

Պիտի շփոթիս նաև, երբ Օրմանյանի մասին գրելու ատեն՝ դիմես լոկ իր գրածներուն, որովհետև անոնք չէին կրնար գրված չլլալ երբեմն իրենք ալ կրբով, և այդ շատ ալ բնական էր, երբ մարդ տասներկու տարիներու տքնութենէ հետո, միայն նախատինք և պարսավ կբաղէ, և երբ ինքն է, որ պարտավոր է այդ տքնութեան տարիներու պատմութիւնը շարագրել հայհուշներու աղմուկին տակ՝ որ մինչև իր աշխատանքի խուցը կհասնի:

Եթէ դուն ինքդ տեղյակ չըլլաս ղեպերուն, որոնք տեղի ունեցան իր պատրիարքութեան տարիներուն, ղժվար թէ կարենաս ճշգրիտ եղբակացութեանց հանգիլ՝ առաջնորդվելով լոկ «Ազգապատում»-ի մեջ իր պատմածներէն կամ «Խոհք և խոսք»-ի մեջ ցանցընված նոթերէն: Եթէ լրիվ ըմբռնած չըլլաս միջավայրը, ուր ան գործեց և մարդիկը, որոնց հետ գործեց՝ ոչ կրնաս նշմարել իր խոցելի կողմերը և ոչ ալ լիովին արդարացնել զայն: Դեպքերը պատմած ատեն երբեմն շատ կընդարձակվի ինքը, և երբեմն ալ ուղղակի կցատկէ անոնցմէ շատերուն վրայն՝ հնարավորութիւն չտալով քեզի, որ իրերուն խորը թափանցես ու ճշգրիտ տեսնես ամեն բան:

Ու հետո, հարկ կա՞ Օրմանյանի մասին գրելու այս նոր փորձին՝ երբ ոչ իր հոբելյանն է, ոչ ալ հանդիսական առիթ մը: Մեր հոռի սովորութիւններէն մեկն ալ մեր վարժութիւնն է բացառիկ առիթներու սպասել՝ մեր միտքը բերելու համար մեռած մարդիկը: Դարադարձներու կսպասենք, որպեսզի անցյալը հիշենք, և հոբելյաններու՝ անդրադառնալու համար մարդոց վաստակին վրա:

Մարդիկ կան սակայն, որոնց անդրադառնալ միշտ կարելի է՝ առանց սպասելու հանդիսավոր առիթներու: Այն դեմքերն են աղոնք, որոնց անունը կապված է մեծ հանգըրվաններու և մեծ ղեպերու հետ, և զորս ոգեկոչել երբեմն անհրաժեշտ է՝ ճանչնալու համար ղեպերը, որոնց խառնվեցան անոնք, և ուսանելի դասեր քաղելու համար մեր մտտավոր երեկէն:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Թուրքիո Հայոց նախկին պատրիարքը, այդ ղեմքերէն է:

\*\*\*

Այս փորձը ուրեմն ուրիշ բան չէ, բայց եթէ անգամ մը ևս անդրադառնալ մարդու մը մասին, որ բացառիկ ղեր կատարած է իր ատենին, և իր կյանքն ու գործը անգամ մը ևս քննել ղեպերու այն հորձանուտին մեջ, ուր ան ապրեցաւ և գործեց: Աղով՝ առիթ մը ստեղծել ակնարկ մը նետելու նաև մեզի շատ մոտ ղեպերու վրա, որոնք արդեն շատ հեռու կթվին, ավա՞ղ:

Իմաստ մը պիտի չունենար այս անդրադարձումը՝ եթէ պիտի գոհանայինք կենսագրական պարզ տեղեկութիւններ տալով իր մասին, իր կյանքէն քանի մը դրվագ հիշելով, իր գործունեութենէն փուլեր պատմելով, ակնարկ մը նետելով իր երկերուն վրա, վերջապէս՝ քանի մը գիծ տալով իր նկարագրին: Այս բոլորը բավական պիտի չըլլային ներկայացնելու համար մարդը այնպես, ինչպես որ էր, անոր կատարած գործը և ունեցած ղերը:

Օրմանյանը անհրաժեշտ էր զննել ղեպերուն մեջ, ուր ան աչքերը բացաւ և որոնց մեջ գործեց:

Թյուրիմացութիւն է անհատները մեկուսացնել իրենց շրջանէն՝ անոնց կյանքն ու գործը պատմելու ատեն: Ոչ մեկ անհատ, որքան ալ բացառիկ արժեք ունեցած ըլլա և բացառիկ ալ ղեր կատարած, անկախ չէ իր միջավայրէն: Անհատները իրենք ծնունդն են նախ իրենց միջավայրին, որմէ շնն կրնար ազդված ըլլալ, կապին մարդոց ծոցին մեջ և շնն կրնար անոնց հետ շփում չպահել, կգործեն պայմաններու մեջ, զորս շնն կրնար արհամարհել, որքան ալ ղորեղ ըլլա անհատական գիծն իրենց մեջ:

Օրմանյան ևս իր շրջանով միայն ըմբռնելի է: Բացառիկ էր ինքն ալ որքան իր անհատական ղիմագծով յամբ, նույնքան իր գործունեութեան մեջ, բայց ան պտուղն է միևնույն ատեն բացառիկ այն պայմաններուն, որոնց մեջ բացվեցաւ իր կյանքի ուղին, և որոնք շարունակեցին իր ամբողջ կյանքի տեղութեանը: Այդ բացառիկ պայմաններն էին, որ Օրմանյանը իրենց ճանկին մեջ առին և քշեցին ուր որ ուզեցին. զայն խլեցին իր ղավանանքն, զայն հեռացուցին իր նախասիրութիւններէն, զայն շեղեցուցին իր կողմէն ալ, և այդքանով ալ չբավականացան ու խուժք շարեցին ոտքերուն առջև, հաճախ շփոթեցուցին, ամբոխը գրգռեցին իրեն դեմ, և լուտանքի ու պարսավանքի նշավակ ըրին, գլորեցին Տարպեան ժայռն վար, հետո ալ ստիպեցին զայն Տարպեան ժայռն վեր մազցիլ ճանկ առ ճանկ:

Օրմանյանի տեղը փնտռելու համար մեր պատմութեան մեջ՝ կարելի չէր չպատմել պէ



մենեն առաջ միջավայրը, ուր հասունցավ ան, այսինքն չճանչնալ «կաթուղիկ միլլեթի»-ն, այն տեսակ մը աղզը, զոր Վատիկան հաջողքեր էր ստեղծել հայ ժողովուրդի ծոցին մեջ՝ մասնիկ մը խլելով անկե և անոր մեջ ամլացնելով իր ավանդույթունները: Այս էջը անհրաժեշտ էր լրիվ ճանչնալ, որովհետև ամենին քիչ ծանոթին է ան մեր մոտավոր պատմության մեջ, և որովհետև ան կուտարանի նաև Օրմանյանի դարձը դեպի Հայ Եկեղեցին:

Կարելի էր պատմել սկսիլ Օրմանյանի գործունեությունը հայ ժողովուրդի ծոցին ներս և շանդրադառնալ նաև այն մթնոլորտին, որ ստեղծված էր հայ կյանքին մեջ Բեռլինի ձախողութենեն հետո, հուսախարության և հուսալքության գիրկը նետելով իր երազներուն մեջ զգեստնված ժողովուրդ մը, և միևնույն ատեն խմորելով նոր հուլումներ և նոր տագնապներ այս անգամ Հայրենիքի հողին վրա: Կարնո դեպքը, որ հասունցավ Օրմանյանի աչքին տակ՝ առաջին պոթիկումն էր այդ հուլումներուն:

Ամենին այնպիսի շրջանը Օրմանյանի կյանքին՝ իր պատրիարքության տասներկու տարիներն էին: Եվ միթե կարելի էր այդ շրջանը ըմբռնել առանց նաև ճանչնալու ամենին ղեկավար հանգրվաններն՝ մեկը հայ նորագույն պատմության, երբ ժողովուրդ մը, լքված իր բախտին, խլիպաբար ճիգեր կրեն փոխել հասնելու, հայ արյունը հեղել կկազմեն փողոցներու մեջ, հոգեբու և սուգերու մեջ կտքա Ազգը, ու վարդապետ մը կկանչեն վանքին, որպիսով դսպե գազանը և Ազգին արցունքը սրբի: Կարելի էր չճանչնալ գազանը և ըմբռնել Օրմանյանի տասներկու տարիներու պայքարը անոր դեմ, տառապանքը, զոր այդ առթիվ կրեց, շփոթության պահերը, զորս ունեցավ, և գերմարդկային ճիգերը, նալը շխորտակված ափունք հասցրնելու:

Փոթորիկը, որ անցավ հայ ժողովուրդի գլխին «հուրբիթ»-ին հաջորդող տասը տարիներուն՝ Օրմանյանի համար ալ ստեղծեց ալիկոծ պահեր, և այդ փոթորիկը ևս ճանչնալ պետք էր, որպեսզի բնթերցողը գիտնար, թե ինչու խելագար դարձավ ամբոխը և Օրմանյանը գլորեց Տարապան ժայռն վար, և ինչու այդքան դժնդակ եղան փորձերը վեր մազլցնելու համար ժայռն, բաց ճակատով նայելու համար դարձյալ մարդոց, և դեր ստանձնելու համար կրկին կյանքի մեջ, ու մյուս կողմի քամելու համար իր աչքերուն ու մտքին վերջին ուժերը՝ որպիսով իր անունը հայ մատենագրության կապե:

Առանց պատճառի չէր հետևաբար, երբ այս էջերը «Օրմանյան և իր ժամանակը» խորագրեցինք: Ասով նախ՝ պարզ կենսագիր

մը դառնալու անհրապույր դերին կաղատի այս տողերը գրողը, և հետո հնարավորությամբ կունենա ակնարկ մը նետելու համար մեր մոտավոր երեկին վրա, ուր այնքան նյութեր կան խորհրդածության արժանի:

\*\*\*

Այս տողերը գրողը պատկանած է սերունդի մը, որ հաշտ աչքով չէ դիտած հաճախ Օրմանյանը: Եթե այդ սերունդին վերապահ, երբեմն ալ բացասական վերաբերումին մեջ դեր ունեցան խափանումները, ուրկե կանցներ այն ատեն հայկական դատը և նախապաշարումներն ու թյուրիմացությունները, որոնք չեն կրնար շատեղծվիլ, երբ բազմաթիվ մտայնություններ կազմված կըլլան միակ դատի մը շուրջ և երբ մարդիկ կիրքով կլեցվին ու փոխադարձ ատելության մեջ ամեն գործի առջև, շմոռնանք սակայն, որ Օրմանյան ինքն ալ երբեմն տված է առիթ ու պատրվակ, ու չէր կրնար շտալ իր խառնվածքով մարդ մը, որուն ուսերուն վրա այնքան բեռ դրած էր Ազգը:

Անձամբ մաս առած ըլլա կամ ոչ պայքարին մեջ, զոր սերունդը կմղե, երբ քեզ ալ բաժին կվերապահես իր հաղթանակներին, բնականաբար դուն ևս պետք է մեղսակից դառնաս իր սայթաքումներուն: Այնպես որ մեծ ու պղտիկ, մեր մատն ունինք գործունեությանը մեջ մեր պատկանած սերունդին և հետևաբար մեր ալ մեղքի բաժինը անոր վրեպներուն մեջ, որքան ալ երբեմն պարզ հանդիսատեսներ միայն եղած ըլլանք այս կամ այն դեպքին պահուն:

Իր սերունդին մեղքը այս տողերը գրողը անգամ մը քալեց, երբ, հոգվածներու շարքով մը, փորձեց Օրմանյանի տեղը փնտռել մեր պատմության մեջ: Առաջին փորձն էր այդ պաղարյուն ու զուսպ նայելու փոթորիկներով լեցուն շրջանի մը վրա, ու մարդու մը վրա, որ ստիպված էր նալ մը անցնել փոթորիկներուն մեջեն:

Երեք տասնամյակ առաջ տպված իր այդ հոգվածներուն մեջ ջանացեր էր այս տողերը գրողը անաչառ ըլլալ մարդու մը մասին, որուն հանդեպ արդար չէին եղած իր ժամանակակիցները, ումանք միայն բիծեր փրնառելով անոր կյանքին ու գործունեությանը վրա, ուրիշներ՝ շողողուն գիծերը տեսնելով միայն, այսինքն երկու կողմն ալ կիրքով էր դատեր զայն և հետևաբար կողմնակալությամբ:

Հիմա, երբ անցեր է ևս երեսուն տարի, ու ավելի ևս պաղարյուն կրնա նայիլ մարդ խժժանքներուն ու գովասանքներուն վրա հավասարապես, իզուր չէր անգամ մը ևս նժարը դնել մեծագույն դերակատարներն



մեկը փորձություններով և շփոթություններով լեցուն բացառիկ շրջանի մը:

Եվ այս երեսուն տարին ուրիշ բան չըրավ, բայց եթե ավելի պաղարյուն դարձուց մեզ Օրմանյանը անգամ մը ևս նժարը դրած ատեն: Ան սորվեցուց մեզ ավելի ևս վերեն նայիլ բիծերուն վրա, զորս ամեն մարդու պես հարկավ ան ալ ուներ, իսկ իր վրեպները ջանալ բացատրել ամեն մեկը իր հարակից ղեպերու առնչությանը մեջ: Այդ բիծերեն շատերը նշմարելի չեն այլևս այսօր, իսկ իր վրեպները կըքանան աչքիդ, երբ վերջին կես դարու ընթացքին հայ կյանքի բեմեն անցած մարդիկը ևս զննես միևնույն պաղարյունությամբ:

Այս երեսուն տարին, փոխարեն, ավելի ևս շեշտեց դրական անբան բաներ, զորս չէինք տեսներ երբեմն, և մեզ ստիպեց, որ ավելի ուշադիր հետևինք անոր կյանքի զանազան հանգրվաններուն, ամեն մեկ հանգրվանը ղենելով իր հարակից մթնոլորտին մեջ, բայց և փնտռենք զանոնք իրարու զոդող ներքին կապը:

Այնպես որ պատմության մեջ Օրմանյանի տեղը ճշտելու մեր այս երկրորդ փորձը ստիպված է մեզ դարձնել ավելի անհիշաշար և ավելի անաշատ: Միևնույն անաշատություն է, որ մեզ կատիպե անկողմնակալ կերպով դատել իր մտքի վատտակը ևս, և ըսել անվերապահ ինչ որ մեզ կթելադրեն ըսել թանկագին նյութը, զոր ան կթողու մեզի, ու թերիները, որոնք, ավաղ, կան մտքի իր վատտակին մեջ:



Էջերը, որ կհետևին, պիտի պատմեն Օրմանյանի կյանքին զանազան հանգրվանները, ամեն մեկ հանգրվանի հետ պահ մը կանգ առնելով ու զննելով շուրջի ղեպերը, կամ ավելի ճիշտ՝ այդ ղեպերուն մեջ փրնտոնելով Օրմանյանի կապն ու դերը:

Բավական հեռացած ենք շրջանեն, որպեսզի կարելի ըլլար ամեն ղեպը տալ իր մասնաբաժնի շրջաններուն մեջ, միմիայն հիշողությանը կամ տպավորությանը ապավինելով: Օրմանյան շատ նյութ տված է մեզի իր կյանքին ու գործունեության և անոնց խառնված ղեպերուն ու ղեմքերուն մասին, բայց իր տված նյութը, մերթ ցանցովի ու մերթ անհարիր, զգուշություն կհարկադրեք, որպեսզի ղեպերուն միջև կապը գտնես, կամրջես անջրպետները և նաև շմուռնու ալդ առթիվ քեզ օգնության կանչելով քու գիտցածդ ու հիշածդ ալ:

Նկատի ունենանք պայմանները, ուր գրի առնվեցան այդ նյութերը և շատ ալ շեղադրենք Օրմանյանը, թե չէ կրցած լրիվ հիշել

ամեն բան, ու հաճախ հեռավոր տպավորություններու դիմած է: Ու թող ոչ որ շեղադրեն նաև այս տողերը գրողը, եթե կթերանա մասնաբաժնի շրջանը մեջ: Շատ բան ստիպված ես զանց ընել, երբ ղեպերը կդիտես հիմա այդքան հեռավորութենե մը:

Եվ արդեն, որպեսզի իրերը տեսնես իրենց բովանդակ կերպարանքին մեջ, պետք է զանոնք դիտես որոշ հեռավորութենե մը: Մտնեն՝ ղեպերուն ժխորը միայն կտեսնես, ու մարդոց մարդկային գիծերը միայն: Հետո, քանի անոնց մոտն ևս և սեփական զգացումները ալ դեռ շատ վառ են, չես կրնար զանոնք տեսնել անաշատ: Ինչ փուլի, որ հեռվեն քեզ չեն երևար մասնաբաժնի շրջանները, բավ է, որ իրենց ամբողջական կերպարանքին մեջ տեսնես հեռավոր առարկաները. մոռցած քեզ անձնապես անոնց կապող կապերը:

Այս էջերը, գրված Օրմանյանի մահեն ավելի քան քառասուն տարի հետո, փորձ մըն են ընդհանուր ակնարկ մը նետելու մեր մոտավոր անցյալին վրա՝ տալով անկե քանի մը գիծեր մեզ նախորդող և մեզ հետ ապրող զույգ սերունդներու հուշումները պատմելու համար, և նաև արտակարգ գործունեությամբ իր կյանքը պսակած մարդու մը վրա՝ տալով կյանքեն ու գործունեութենեն ալ գիծեր՝ ավելի լրիվ ըմբռնելու համար փոխադարձաբար իր շրջանի անցքերը:

Ասով կկարծենք առիթ մը տված ըլլալ նոր սերունդին ալ, որ շատ բան հարեանցի միայն գիտն մեր մոտավոր անցյալին և անոր խառնված ղեմքերեն, որպեսզի գտնե քանի մը թելեր ունենա, երբոր փորձն մեր երեկը պրպտել և անոր կապված մարդիկը: Ոչինչ կա այնքան ուսանելի, որքան ճշգրիտ դատաստանը, զոր մարդ կհաջողի ընել երեկը և իր մարդիկը նժարը դրած ատեն:

Միակ առավելությունը, զոր ընթերցողը պիտի գտնե այս էջերուն մեջ, անոնց անկեղծությունն է: Այս տողերը գրողը չէ կաշկանդված նախապաշարումներեն, զորս մարդ հաճախ կունենա մոտավոր անցյալի անցքերն ու անձերը վերհիշած ատեն, ոչ ալ կամչնա, երբ շատ բան տարբեր կգտնես իր կարծիքներեն:

Ու փոխարեն պիտի աշխատի անկեղծ ըլլալ Օրմանյանի գործունեության մեջ վրեպներու հանդիպած ատեն ալ: Մեռնողներուն մասին կամ լավ կամ քնավ՝ ըսված է: Ճշմարիտ է այս՝ երբ դամբանական կիսոսիս թարմ հողակույտի մը վրա: Ստիպված ես, այդ պահուն, բարեմասնություններ միայն փրնտոնել մարդուն վրա, որ քեզմե հրաժեշտ կառնե դեռ նոր: Բայց երբ անցած են շորս տաս-



նյակ տարիներ, և այլևս զգացումները չէ, որ քեզ կթելադրեն բառերդ, կրնաս, ու պարտավոր ես, անկեղծությամբ միայն ուղեցույց բնել քեզ: Օրմանյան ինքն իսկ չէ կաշկանդած ինքզինքը՝ մեռնողները դատելու ատեն: Ա-

մեն մեկ դեմքի մասին, դայն դագաղը չդրած, կրսե իր անկեղծ կարծիքը:

Մեկ բան միայն պարտական ենք մեկնողներուն, երբ անոնց մասին կխոսինք. բլալ անաշառ:

## 2. «ԿԱԹՈՒԼԻԿ ՄԻԼԼԵԹԻ»-Ն

Օրմանյանի կյանքին ու գործունեության մասին անհնար պիտի ըլլար գրել, առանց ծանոթ ըլլալու այն տեսակ մը նոր ազգության, որ ծագում առած էր անցյալ դարու առաջին տասնամյակներուն և որուն ծոցը ծնալ ինքը Օրմանյան:

Անհրաժեշտ էր գիտնալ, թե ի՞նչ էր այդ «Կաթոլիկ միլլեթի»-ն, որ հայ ժողովուրդի ծոցին բաժնված, առանձին համայնք կալմած և մտած Հոռմի հովանիին տակ, սկսած էր տակալ ուրանալ նաև հայ ավանդությունները, արհամարհել հայ լեզուն, նույնիսկ պահ մը ամենալ իր հայ ծագումնա:

Անհրաժեշտ էր այդ «Կաթոլիկ միլլեթի»-ն ճանչնալ նախ, որովհետեւ իր կյանքին առաջին կեսը անոր ծոցին մեջ անցուց Օրմանյան, և կաթոլիկ դաստիարակությունն էր, որ կազմեց իր կրթության կորիզը՝ այբուբենին սկսյալ մինչև մագիստրոսության վկայականները: Մնած կաթոլիկ և կաթոլիկ դաստիարակված, իբրև կաթոլիկ ալ գործեց մինչև իր կյանքին կեսը:

Հետո նաև այն բանին համար, որ Օրմանյան ինքն իսկ գործոն մաս առավ այն ներքին պայքարներուն մեջ, որոնք մղվեցան այդ նոր ազգության ներսը, սրտով հայ մնացած խումբ մը մարդոց կողքին, որոնք կաթոլիկ դավանանքին անցած ըլլալով հանդերձ, չէին ուղեր վերջապես խզել իրենց հոգեկան կապերը մայր ժողովուրդին հետ, և որոնք այդ գաղափարին համար կռիւ մղեցին ոչ միայն ներսի մոլեռանդներուն դեմ, այլև ճակատ բացին վատիկանի դեմ ալ:

Եվ վերջապես այն պատճառով ալ, որ այդ համայնքի ծոցին մեջ մղված պայքարներուն շնորհիւ էր, որ Օրմանյան սկսավ տեսնել ալլասներով, որուն կռիւներ իր պատկանած համայնքը, և բոլոր այն հակասությունները, զորս կգտնէր ճշմարիտ քրիստոնեության և իրեն ավանդված վարդապետությանց միջև, միտքը կրացվեր նոր հորիզոններու, խորթ կսկսեր գալ իրեն կաթոլիկ տարազը, և իր մեջ կխմորվեր բաղձանքը Հայ Եկեղեցւոյ գիրկը գալու՝ հոգին ձեռքադատելով բռնազրոսիկ տեսությանց լուծեն:

Այդ «Կաթոլիկ միլլեթի»-ն, ճիշտ է, պաշտոնապես ստեղծվեցավ անցյալ դարու երկրորդ քառորդին, բայց անոր սերմը դարեր առաջ նետված էր: Ան հզորակացությունն էր

Հոռմեական Եկեղեցւոյ դարավոր ճիգերուն՝ իր փարախը բերելու համար հայ ժողովուրդը:



Հայ ժողովուրդի պատմության ամենին տխուր և միևնույն պատեն ամենին ամոթալի էջերեն են դավանական վեճերը: Քաղկեդոնին կսկսին անոնք և կհասնին մինչև մեր օրերուն, տարբեր փուլեր և տարբեր երանգներն անցնելով տասնհինգ դարերու ընթացքին: Ամենին առաջ այդ վեճերը Բյուզանդիոնին բխեցան, դարերով զբաղեցուցին Հայ Եկեղեցին, ճակատագրական դեր կատարելով հաճախ հայ ժողովուրդի կյանքին մեջ ևս:

Կիրիկյան շրջանին է, որ կսկսի Հոռմի արշավանքը հայ ժողովուրդի ծոցին ներս: Շրջան մըն է, երբ հայ ժողովուրդը Արևմուտքի աջակցության պետք ունի իր անկախությունն ու գոյությունը պահպանելու համար, իսկ Հոռմ կզգացնե, թե առանց իր հրամանին տերև չի շարժի Եվրոպայի մեջ: Ունիթոնները կասպատակեն Կիրիկիան, ճակատ կըստեղծվի հայ ժողովուրդի ծոցին մեջ, հայոց թագավորներեն ու կաթոլիկոսներեն ոմանք ծուղակը կիյնան խարված, բայց չեն հաջողիր իրենց ետևեն քաշել հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին:

Կիրիկիան կործանեցաւ, անգամ մըն ալ ցանուցիւր եղավ հայ ժողովուրդը, ու մայր զանգվածը սկսավ հեծել լուծերու ներքև: Հայ ժողովուրդի ղեկավարները անգամ մը ևս միամտությունն ունեցան կարծելու, թե փրկությունը Հոռմի ճամբով միայն կրնա գալ: Կաթոլիկոսներն ունեցանք, որ զացին Հոռմը սիրաշահիլ անձամբ, բայց սակարկությունը շատ գոեհիկ էր, որպեսզի հայ ժողովուրդը խոնարհեցներ գլուխը:

Հուսախար էր հայ ժողովուրդը Հոռմին ու Արևմուտքին, բայց վատիկան դեռ հուսախարված չէր: Ան կփորձեր հայ ժողովուրդի ծոցը թափանցել տակալ: Առաջին առթիւ զոհ կերթային քանի մի հայ գաղութներ՝ վրա տալով նախ իրենց դավանանքը, և հետո իրենց բոլոր ազգային ավանդությունները կարգով: Հիմա մոխիրը միայն կմնա անոնց:

Կհաջորդեն ուրիշ շրջան մը, երբ Հոռմի գործակալները իրենց արշավանքին թիրախ կդարձնեն Պոլիսը: Կաթոլիկ Ֆրանսուան անոնց կոնակն է: Եվ ի՞նչ տխուր պայքար



հայ ժողովուրդի ծոցին մեջ: Հայ ժողովուրդին ներսը կշատանան խայծին զոհերը, իսկ հայ հոգևոր իշխանությունները ամեն գնով կմաքառին անոնց ղեմ: Կրճնկին պահ մը կիրքերը, մարդիկ կկուրնան, արյուն կթափի: Խոց մը կձևանա հայ հոգիին մեջ:

\*\*\*

Օրմանյան, ղեռ աչքերը չբացած, Պոլսո հայությունը մեկ կողմե դավանական վիճերու և մյուս կողմե միաբանական ծանոթ փորձերու հանդիսատես կըլլար զարուհ սկիզբեն ի վեր:

Ի վերջո, մարմին կառնեք «կաթոլիկ միլլեթի»-ն, այսինքն կաթոլիկ հայ համայնքին հետ նոր ազգ մը կառնեղծվեր Հայ Ազգի կողքին: Թուրքերը ղեկավար համակերպեր էին կաթոլիկ հարանվանության մը ստեղծման թուրք պետության յահմաններուն մեջ, այն երկյուղով, որ կաթոլիկ պետությունները, և առաջին հերթին Ֆրանսան, պատրվակ պիտի ընեն զայն Թուրքիո ներքին գործերուն և միջամտելու: Պետք էր եղեր, որ Ֆրանսան քանի մը դար ճիգ ու սաղրանք վատնե և վատիկան փոթորիկ մը ստեղծե հայ ժողովուրդի ծոցին մեջ, որպեսզի թուրքերը զիջանին հայ կաթոլիկ պատրիարքության մը կազմության: Բայց անգամ մը հավանած՝ իրենք եղան զայն շահագործողը: Առիթ մըն էր ան իրենց՝ Հայ Ազգը ճեղքելու երկու ոտիս թևերուն:

\*\*\*

Ընթերցողը այս «կաթոլիկ միլլեթի»-ն չի շփոթեր անշուշտ զմայլելի այն սերունդին հետ, որ հայ կաթոլիկներու ծոցին մեջ եկավ, հայ նոր վերածնության դարը օժտելով այնքան շքեղ ղեմերով: Ոմանք ուղղակի կուգային հայ կյանքին՝ խառնվելու համար հայ ժողովուրդի բացառիկ հուզումներուն, զորս այդ դարը բերավ, բայց մեծ մասամբ Մխի-

թարյանց բովեն անցնելով, Մխիթարի և Ալիշանի ազնիվ շունչը ծած: Առանց այդ շունչին ո՞ր կունենայինք, օրինակ, Մատթեոս Մամուրյանն ու Արփիար Արփիարյանը, որոնք հայ հրապարակագրությունը հայրենասիրությամբ թրծեցին, Մկրտիչ Պեշիկ-թաշլյանը և Թովմաս Թերզյանը, որոնք հայ քերթողությունը պճնեցին անմահ երգերով, Սրապիոն Հեքիմյանն ու Սրապիոն Թղլյանը, որոնք հայ նոր բեմին նախակարապետներն եղան, պատկառելի Մերենցը, որ հայ հայրենասիրական վեպին փառքն եկավ կիսել Բաֆֆիի հետ մեկտեղ: Ո՞ր կունենայինք հանրային այնքան գործիչներ, որոնք թթխամորն եղան խոսքներով լեցուն այդ դարուն բացառիկ հեքին, Հովհաննես Չամիչյանի, Միքայել Փորթուգալի, Հովհաննես Սազրզյանի պես մարդիկ, որոնք թրքական նախարարի աթոռներուն վրա իսկ հովտ մը չզոհեցին իրենց հայրենասիրությունն, և ղեռ այնքան մարդիկ, որոնք սներ էին Չամիչյանն ու Ալիշանեն, Այտընյանեն ու Տաշլյանեն ժառանգ մնացած ավիշով, և որոնցմե շատերը մինչև մեր օրերուն հասան՝ կոթողանալով արվեստներու մարզին մեջ, ինչպես էղգար Շահենը և Արսեն Շապանյանը, ինչպես Պետրոս Ադամյանն ու Դանիել Վարուժանը, որոնք կրցան հասնիլ անհնարին բարձունքներու՝ հայ հոգին իրենց ներսը միշտ անշեղ պահած, ոմանք ալ շնչահեղձ եղած շատ կանուխ իրենց հայրենասիրության պոռթկումին մեջ, ինչպես Տիգրան Երկաթը: Եվ ասոնց կողքին, ավա՜ղ, գորշ զանգվածը ուժացածներուն, որոնք ուրացան ժողովուրդը և պարծենցան, թե հայ չեն:

Օրմանյան, երբ աչքերը կբանար, կազմված էր արդեն «կաթոլիկ միլլեթի»-ի առաջին սաղմը և սկսած էր աշխատես ղեկավար մը, այս անգամ հայ կաթոլիկ համայնքի իր իսկ ծոցին մեջ:

### 3. ՀՈՌՄԻ ՀՈՎԱՆԻՆ ՏԱԿ

Մաղաքիա Օրմանյան ծնավ և սնավ կաթոլիկ հայ միջավայրի մեջ:

«Կաթոլիկ միլլեթի»-ն Պոլսո մեջ պաշտոնապես գոյություն ուներ արդեն այդ օրերուն, և անոր ծոցը սկսած էր կազմվիլ կորիզ մը, որ հայ ավանդություններեն կուծանար տակավի:

Բայց և մաս մը կար, որ կհամառեր ղեռ պահել զանոնք:

Օրմանյանի ծնողքը այս վերջին դասն էր: Մաղաքիա Օրմանյան, ծննդյան անունով Պողոս, ծնած էր 1840 փետրվար 11/23-ին Պոլսո Պերա թաղը, ուր հայրը՝ Անտոն Օրմանյան, ղեկագործ էր: Պողոս ուսումնա-

տենչ էր մանուկ հասակեն, և հազիվ 7 տարեկան է, երբ զինքը կղենե վենետիկի Մխիթարյանց Սազըղ-Աղաճի ուսումնարանը, ուրկե սակայն տարի մե հետո, 1848 նոյեմբեր 15/27-ին, կանցնի Անտոնյան միաբանության Չյոփլյուք-Չեշմե փողոցին վրա բացած դպրոցը, և այդ օրեն կսկսի իր կապը Անտոնյանց հետ, կապ, որ ճակատագրական դեր պիտի կատարեր հետագային իր ամբողջ կյանքին համար:

Օրմանյան երկուրորեկ տարի հազիվ կմնա Անտոնյանց Պերայի վարժարանը, և 1851 մայիսին, երբ ղեռ 11 տարու է միայն, ծնող-



քը զայն կղրկեն Հոռոմ, ուր Անտոնյանք վանք ու դպրոց ունենին:

Անտոնյանց վանքին մեջ կրոնավորական օրհնությունը հազիվ ստացած, 1858 հունվարին, նորրեմա Մաղաբիա Օրմանյանը կսկի հաճախել վանքին մոտ եղող վատիկանյան դպրոցը լատիններենի ուսումը զորացնելու համար ճարտասանության դասարանին մեջ, իսկ նույն տարվան նոյեմբերին կանցնի Ս. Ապոլինար հաստատությունը, որ եկեղեցական ուսուցման կատարյալ ընթացք և ծրագիր ուներ համալսարանական արտոնություններով, և որ, ինչպես կրես Օրմանյան, «բնիկ հռոմեական կղերին օրրանն ու կեդրոնն է, և անկե կելին պապական պաշտոնատանց անդամները և հետզհետե եպիսկոպոսության և կարդինալության կբարձրանան»<sup>1</sup>:

Օրմանյան համալսարանական ուսմանց հետևած ատեն, վանական պաշտոններ ևս կվարեր միևնույն ատեն Անտոնյան միաբանության մեջ:

«Ըստ այսմ 1859 հոկտեմբեր 5/17-ին նորրեմայից դասարանին կառավարչության անվանվեցաւ,— կգրե ան,— իբրե վերակացուին կամ տեսուչին օգնական: Մյուս տարին 1860 հոկտեմբեր 28/9 նոյեմբերին նույն դասարանի աշակերտաց դասախոսել սկսաւ, կառավարչություն ալ շարունակելով: Տարի մը ևս անցնելէն ետքը մատենադարանապետ անվանվեցաւ, տպագիրները և գրչագիրները և դիւանական գրությունները պահելու և կարգավորելու հատուկ հանձնարարությամբ, և երեք ճյուղերուն ալ հիմնական կարգ ու սարք մտցուցի, և նոր ի նորոց ցուցակներ կազմեցի: Վանական բարտալարության աշխատանքներն ալ միանգամայն կկատարեի. և այդ բոլոր զբաղումներով միևնույն աշակերտական ընթացքը անթերի կըրացնեի, օրը երկու անգամ վանքեն իբր կես ժամ հեռու եղող Ս. Ապոլինարի հաստատությունը երթալով ու գալով, և դասախոսությանց ատեն ուսուցիչներու խոսածները գիրի առնելով»<sup>2</sup>:

Ավելի հետո, երբ արդեն կուսակրոն քահանա ձեռնադրված է 1863 օգոստոս 12/24-ին, ինչպես և աստվածաբանության հրապարակային քննությունը անցնել (1865 մայիս 27/8 հունիս) և մագիստրոսական ծիսական օրհնությունը ստանալ (1865 օգոստոս 22/3 սեպտեմբեր) ետք ևս վանական զբաղումներեն չի բաժնվիր:

«Պաշտոնական զբաղումներուն անցնելով՝ նախընթաց միջոցին մեջ ունեցած պաշտոններս այս միջոցին մեջ ալ շարունակեցի,—

կգրե,— 1864 փետրվար 21/4 մարտին նորրեմայից դասարանին կառավարչութենէն վերակացության կամ տեսչության բարձրացաւ, և 1865 հոկտեմբեր 28/9 նոյեմբերի Պրոպագանդայի դպրանոցին մեջ հայերեն լեզվի ուսուցիչ նշանակվեցաւ, վանական վարժանին մեջ դասատվությանց ժամերը հետզհետե շատցան, միջոց մը մատակարարության պաշտոնն ալ վարեցի, շարունակելով մատենադարանապետության և բարտալարության և հաշվակալության պաշտոնները»<sup>3</sup>:

\*\*\*

Օրմանյան իր դաստիարակությունն ստացավ այսպես Հոռոմի հովանիին տակ: Ուսանողության իր տարիները իր կյանքին ամենեն ուշագրավ շրջաններն են կը կկազմեն: Անոնք է, որ ճամբա պիտի բանային իրեն դեպի պալլարով ու ճիզերով, աղմուկով ու տրեմությամբ լեցուն այն կյանքը, որ իր հղավ: Բնածին ուշիմությունը միացած իր համառ աշխատանքին, պիտի օժտեին զայն հիմնական պատրաստությամբ մը. իսկ իր խուզարկու միտքը և տրամաբանելու իր արտակարգ ձիրքը քարացած պիտի չպահին իր ուղեղը, որքան ալ կապեր միաբանության մը սեղմ հորիզոնին մեջ և դաստիարակության մը հանձնված, որ կարգիլ հոգին ընդլայնելի:

Անդրադառնալով իր կյանքի այս առաջին շրջանին, Օրմանյան ինքն իսկ կգրե. «Հոռոմեական ծնողաց զավակ եմ եղած, մանկութենն անոր մեջ սնած, տասը տարիներ հաղիվ լրացուցած՝ Հոռոմի մեջ Անտոնյանց վանքն եմ մտած, և կատարյալ կերպով անոնց ուղղությամբ կրթված, և նույն միաբանության մեջ ուստադիր կրոնավորած եմ տալանույթներորդ տարիս լրացնելէ ամիս մը առաջ: Անկե ետքը սկսած եմ լատին եկեղեցական վարժարաններու հետեի, և հռոմեական կղերին օրրան եղող Ս. Ապոլինարի կամ Հռոմեական դպրանոցի համալսարանական ուսմանց ընթացքն եմ լրացուցած, երկու տարի իմաստասիրության, շոք տարի աստվածաբանության և երեք տարի կանոնագրության դասերը ավարտած, և երեք ճյուղերու մեջ զատ-զատ մագիստրոսական (doctorat) աստիճաններ ստացած եմ: Աստվածաբանության ընթացքը ավարտած եմ ցանցառ տեղի ունեցող, իսկ արեւելցի մը կողմն բնավ չկատարված, հրապարակական քննության (alto publico) ձևով և պապի հովանավորությամբ: Հռոմեական Աստվածաբանական կաճառին ալ անդամ ընտրված

<sup>1</sup> «Խոհր» և «խոսք», էջ 51:

<sup>2</sup> Անդ, էջ 52:

<sup>3</sup> Անդ, էջ 55:



եմ՝ պայմանյալ քննությունները լրացնելով: Մեկ խոսքով կաթոլիկության թափանցած և անով տոգորված ու զարգացած անձ մը եղած եմ, անոր մեջ բարձր դիրք մըն ալ գրավելու ճշմարտանման հավանություններ<sup>4</sup>:

#### 4. ԿՈԼԵԶՅԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԲՍՅԱՆՆԵՐԸ

Կարենալ հետեւելու համար Օրմանյանի կյանքի ընթացքին, պարտավոր ենք ճանշնալ մթնոլորտը, որ կազմված էր հայ կաթոլիկ հասարակության ծոցին մեջ անցյալ դարու կեսերուն, երբ դեռ նոր մարմին առած, բայց արդեն բունկած էր հայ կաթոլիկ համայնքը ներքին վեճերով: Պայքարը, որ երբեմն մղվել էր հայ ժողովուրդի ծոցին մեջ, մայր զանգվածին և անկե ուժանալ փորձող հատվածի մը միջև, հիմա փոխադրված էր այդ հատվածին ներս՝ հազիվ ան գտած իր օրինական դիմագծությունը:

Բոլոր անոնք, որ փորձած են հայ ժողովուրդին մասնիկ մը խելը զավանափոխ դարձնելով զայն, առաջին հերթին աշխատած են ազգային զգացումը մարել իրենց որսերուն ներսը: Ազգային զգացումը կրնար հոգեպես դանդաղ դեռ կապված պահել մայր զանգվածին հետ, և թույլ չտալ որ անոնք ջերմորեն փարին իրենց նոր դավանանքին: Պետք էր ուրեմն այդ կապը ևս խզել:

Անցյալ դարու կեսերուն մղված պայքարը հայ կաթոլիկ համայնքին մեջ, պայքարն էր առաջին հերթին երկու հակոտնյա մտայնությանց՝ ազգային ոգիի պահպանման շուրջ: Հակառակ Հոռմի՝ գործակալներուն բոլոր սադրանքներուն, ազգային ավանդությանց կառչող տարր մը միշտ կար, որ կմաքառեր դեռ հանուն անոնց:

Վատիկանի գործակալները նվազ չեն մաքառած լատին ծեսը պարտադրելու համար իրենց փարախը մտնողներուն: Ծեսը հավատքի մը արտաքին ձևակերպությունն է միայն, բայց ան իր մեջ կիստացնե նաև ազգային վաղեմի ավանդությունները: Հայ ծեսը վերցնել Հայ Կաթոլիկ եկեղեցիին՝ կնշանակել զայն ավելի ևս բաժնել այդ ավանդություններին: Պատմությունը ցույց կուտա, որ ավելի կանուխ ուժացան հայ կաթոլիկ այն համայնքները, որոնք հրաժարեր էին իրենց հայ ծեսին, փոխարեն՝ շատ ավելի դիմացան և հայ մնացին անոնք, որ պահպանեցին զայն:

Անցյալ դարու պայքարներուն մեջ ծեսի հարցն ալ դեր կխաղար: Կոլեջյաններու և Աբբայաններու միջև կոիվը ուրիշ բան չէր, բայց եթե ազգային ավանդությանց, և հետևաբար նաև ծեսի պահպանման շուրջ մղված գոտեմարտ:

Օրմանյան իր կյանքի առաջին շրջանը փառքով կփակե:

Ան պատրաստ է իր առաքելության համար:

Ան ճանչցած է Հոռմը:

Զմոռնանք նաև, որ հայ կաթոլիկներու ստվար զանգված մը ավելի արագ կորսնցույց իր հայ դիմագիծը, որովհետև հայերենը շատ շուտ մոռցավ: Կային քաղաքներ, ինչպես Անգարան, ուր թուրքերենն էր հայ կաթոլիկներու մայրենի լեզուն, ճիշտ ինչպես ոչ քաղաքներ կային, ուր թուրքերեն կխոսեին հայ լուսավորչականները, ինչպես Կեսաբիան, Բրուսան կամ էդիրնեն: Բայց թուրքերենը սկսավ տակավ մայրենի լեզու դառնալ հայ կաթոլիկներուն համար քիչ մը ամեն տեղ, թեև անոնց «արիստոգրասիա»-ն նախընտրեր էր ֆրանսերենը՝ որդեգրել իբրև մայրենի լեզու: Լեզվի կորուստը կոչված էր խրամատը լայնցնելու, և ավելի ևս արագացնելու հոգեկան այլասերումը: Եթե Մխիթարյանք ուրիշ ոչ մեկ արժանիք ալ չունենան, կրնան իրենց փառքի տիտղոս ընել ճիգը, զոր վատնեցին հայ լեզուն պահպանելու և տարածելու համար հայության բոլոր խավերուն մեջ անխտիր: Եվ Սակայն Մխիթարյանք ամեն բան չէին հայ կաթոլիկ համայնքին մեջ: Հայ լեզվին խրաշուղները կմնային միշտ ուժեղ:

Պայքարը, զոր երկու հոսանքներ մղեցին հայ կաթոլիկ հասարակությունն ներս՝ մեր նորագույն պատմության մեջ կհիշվի հաճախ Կոլեջյաններու և Աբբայաններու պայքար անվան տակ: Աբբայան տիտղոսին ներքև առհասարակ վեներտիկի Մխիթարյանները կհասկցվեին, իսկ Կոլեջյան բառը կակնարկեր Պրոպագանդայի դպրոցն եկողներուն: Երկու հակամարտ թևերու միջև բուռն պայքար մըն էր այդ, ուր Մխիթարյանց վիճակված էր հայ զգացումներուն թարգմանն ըլլալ այլասերման ասպետներուն դեմ:

Անցյալ դարու այդ տվեղ պայքարները և անոնց վերջ տալու համար տեղի ունեցած փորձերը հիշած ատեն, կարելի չէ ալստեղ շանդրադառնալ նաև այն գնահատելի կեցվածքին, զոր հաճախ ունեցան մխիթարյանները: Արդարև, բանիցս անոնցմե եկեր էր վեճերը իրավաստհույժամբ մը լուծելու նախաձեռնությունը: Ստեփանոս Գյուվեր Ագոնցի աբբահայրության տարիներն էին, և Մխիթարի շունչը անգամ մը ևս կտիրեր վեներտիկի մեջ: Ագոնցի շրջանը մեկն էր արդարև այն պահերն Մխիթարյանց կյանքին մեջ, երբ միաբանությունը կշանար լրիվ

<sup>4</sup> «Խոհ» և «խոսք», էջ 3:



նվիրվել իր առաքելության: Հայ ուսմանց տրված բացառիկ զարկը այդ օրերուն՝ Մխիթարյանց պատմության մեջ իսկապես լուսավոր կետ մըն էր: Այդ շրջանին է, որ Մխիթարյանք Պոլսո մեջ բռնկած կիրքերը խաղաղեցնելու կձգտեին, փորձ, որուն մեջ իր հայ մարդու դերը սրտցավորեն կփորձեն պահ մը կատարել նաև մեծ գիտնականը՝ Հ. Միքայել Չամչյան: Կրսնք պահ մը, որովհետև Մխիթարյանց ծոցին մեջ եղած ամեն փորձ հայ ժողովուրդի հավաքական ամեն բանի դերադասելու՝ կարճ է տևած: հասած է շուտով Հոռոմի սաստը, և այդ սաստը արհամարհելու երբեք ի վիճակի չեն եղած Մխիթարյանները:

Դժվար է երկու տերանց ծառայել միևնույն ատեն, ինչպես դժվար է երկուքին ալ հաճելի ըլլալ: Մխիթարյանց երկուքուկես դարու կյանքը հարստեան ճիգ մըն էր հավատարիմ մնալու հայ ժողովուրդին, և միևնույն ատեն հաճելի դառնալու Հոռոմին:

Հոռոմեն սաստ ընդունելու մտավախությունը որքա՛ն զիջումներու և նվաստությանց մղած է արդարև Մխիթարա տունը իր գոյության ամբողջ ընթացքին, թեև պահեր շատ եղած են, երբ հոգիները փորձած են սոկալ Ս. Ղազարու մեջ:

Պետք է ըսենք ճիշտ այստեղ, թե սայթաքած են ու միշտ պիտի սայթաքին բոլոր անոնք, որ հայ ժողովուրդի շահերը կստորադասեն կողմնակի նկատումներու: Կրոնական տեսակետներու գերի դառնալ, երբ տարբեր դիրք կպահանջե հայ ժողովուրդի շահը՝ անմտություն է, և միևնույն ատեն ոճիր: Որքան հայրենասեր ալ ըլլաս, Մխիթար կամ Ալիշան իսկ կոչվիս, երբ հանկարծ վատիկանի մեկ սաստը պիտի կարենա կաշկանդել հոգիդ, հայրենասիրությունդ անարժեք ձորձ մը կդառնա լոկ ուսերուդ:

Ինչո՞ւ պիտի գրվեին կամ թարգմանվեին, օրինակ, հարյուրավոր այն հատորները, որ

րոնք լույս աշխարհ եկան վկայելու համար պարզապես, թե Մխիթարյանք ևս չեմ կաթողիկներ են: Փառքի ի՛նչ տիտղոս են անոնք Մխիթարյանց համար և ի՛նչ օգուտ բերին անոնք հայ ժողովուրդին: Անոնք տավեցան որպեսզի չկարգացվին, կա՛մ մզլոտեցան պահեստներու մեջ, կամ տարածվեցան աջ ու ձախ՝ երբեք ալ ընթերցող չունենալու համար:

Ու նշենք այստեղ զարմանքով և մանավանդ ցավով հակադիր կեցվածքը ևս Մխիթարյան զույգ միաբանությանց՝ նույն օրերու հայ կաթողիկ ներքին պայքարներուն մեջ: Մինչ վենետիկցիները ազգային ավանդությունները անվթար պահելու կողմն էին, Վիեննան անձնատուր եղած կթվիր Կոլեջյաններուն: Կարելի չէ, պատմությունը թղթատողի մը համար, կսկիծով շեցվիլ այս պատկերին առջև, երբ միևնույն ուխտին երկու տարբեր թևերը տարբեր դիրք կբռնեն, և հայ ավանդությանց կվարանի զորավոր կանգնիլ Վիեննան, ան, որ հայկական հետազոտությանց բեռը այնքան զուրգուրանքով պիտի առնե օր մը ուսերուն և հայ բանասիրությունն ու հայ հնագրությունը պիտի օժտե Դարագլուխ կազմող երկերով, հայ ժողովուրդին պարգևելու այնքան շքեղ դեմքեր ալ, որոնց մեջ հայրենասիրությունը և դիտությունը համընթաց պիտի քալեին, և որոնք հայ ժողովուրդը պիտի դժվարանային զոհել կողմնակի նկատումներու, ըլլա իբրև արբահայր՝ որպիսին եղան Այտընյան և իր հաջորդները, ըլլա իրենց գրասենյակին առջև՝ Տաշյանին կամ Ակինյանին պես:

Կոլեջյաններու և Աբբայաններու այդ պայքարներու ընթացքին է, որ պիտի հասունար Անտոն Հասունյան, որ տասնյակ տարիներու իր շարաշուք գործունեությամբ պիտի դար ի վերջո հաղթանակ ապահովել Կոլեջյաններուն և պատուհասը դառնալ ամբողջ համայնքի մը:

## 5. ՄԱՐԴ ՄԸ ԵՎ ԻՐ ԱՎԵՐԸ

Մինչ Օրմանյան դեռ կուսաներ Հոռոմի մեջ՝ Պոլիսը ասդին թատերաբեմ կդառնար զգվելի պայքարներու հայ կաթողիկ հասարակութենեն ներս, հոգևորականի մը պատճառով, որ ամենեն սև էջերը արձանագրելու կուգար նույն այդ հասարակության անցյալ դարու կյանքին մեջ:

Անտոն Հասունյան էր այդ, որուն անունը կապված է այն փորձերուն հետ, որոնք եղան հայ ժողովուրդի վերջին ավանդությունները չքացնելու հայ կաթողիկ հայության ծոցին

մեջ և որոնք կոչված էին ստեղծել ճակատագրական բեկումը Օրմանյանի ներսը ևս:

Անտոն Հասուն Պոլիս ծնած էր 1809-ին և զավակն էր Յաղուբ Հասսո անուն հայկացի ասորիի մը, պզտիկ տարիքեն ղրկված էր Հոռոմ և 1830-ին Պրոպագանդայի դպրոցն ընդունված: Երբ 1833-ին Պոլիս կդառնար, կսկսե Խսկույն դիրք գրավել, մեկ կողմն շնորհիվ իր բացառիկ ուշիմության և բացառիկ ալ մեքենայությանց, և մյուս կողմն՝ Հոռոմին իր գտած պաշտպանության 1842-ին, դեռ հաղիվ 33 տարեկան:



ծիշտ այդ օրերուն, կաթոլիկ հայ համայնքին ծոցին մեջ կազմակերպություն մը ծնունդ կառնե, որ կոչված էր լուսավոր գիծ մը ձգել անցյալ դարու տարեգրությանց մեջ: Համազգաց ընկերությունն էր այդ:

Համազգաց ընկերությունը կուգար պահու մը, երբ հայ կաթոլիկ համայնքին ծոցին մեջ բռնկած էր պայքարը: Նորակազմ ընկերությունը պիտի գար խարխիս մը ըլլալ հայ ավանդությանց պահպանման: Ան ընդունվեցավ ջերմությամբ և գորգուրանքով:

«Անակնունելի ըլլալու շափ արագ և մեծ եղավ ընկերության հաջողությունը, որուն բազմությունը մասնակցեցան հայազավաններն ալ, թեպետ հոռմեադավան կնկատվեց հաստատությունը, բայց այս ավելի կզայրացներ Կոլեջյան ուղղությունը, որ այլևս իր հին անունը կորսնցնելով, Հասունյան սկսած էր կոչվիլ, այնչափ աճած և ընդարձակված էր Հասունին ազդեցությունը: Հոռմեականաց մեջ ալ շատ էին Համազգացի համակիրները, բայց մյուս կողմեն Հասուն չէր դադրեր արգելք հարուցանել, կիրքեր գրգռել, իրեններուն միտքերը վրդովել, մինչև եկեղեցականներու ձեռքով բարոգել, թե Հոռմեական Եկեղեցին արգելու միաբանիլ ընդ հեռեախկոսս, հետեաբար սպառնալով, թե ոչ կարեմք տալ ձեզ արծաղումն և հաղորդութիւն, քանի որ այդ ընկերության մեջ կմնաք»<sup>5</sup>:

Համազգաց ընկերության ոգին Մկրտիչ Պեշիկթաշլյանն է սակայն, դեռ հաղիվ տասնութամյա պատանի, բայց արդեն համակված ալ իսն խանդավառ հուզումներով, որոնցմով բռնկած էր հայ կյանքը անցյալ դարու կեսերուն:

«Պեշիկթաշլյանը Կոստանդնուպոլսում ծավալում է նաև ակտիվ հասարակական գործունեություն: Հասունյան և հակահասունյան մոլեռանդ պայքարի շրջանում, նա, դեռ 18-ամյա պատանի, մասնակցում է «Համազգաց ընկերության» կազմակերպմանը (1846 թ.): Կուլտուրական-լուսավորական գործունեությունից բացի, այդ ընկերությունը պայքարում էր հայ ժողովրդին ըստ դավանանքի բաժանելու և կրոնական երկպառակությունների դեմ: Ընկերությունը անհաշտ պայքար էր ծավալել Անտոն Հասունյան վարդապետի դեմ...: Այդ պայքարի ընթացքում Պեշիկթաշլյանին չէր կաշկանդում այն հանգամանքը, որ նա պատկանում էր հայ կաթոլիկ համայնքին: Հասունյանի ստոր մատնությամբ «Համազգաց ընկերություն»-ը փակվելուց հետո Պեշիկթաշլյանը Երեւանի և ուրիշների հետ

միասին հիմնում է «Բարեգործական ընկերություն», որը նույնպես փակվում է Հասունյանների դավադրության պատճառով»<sup>6</sup>:

Տարիներ առաջ, Պեշիկթաշլյանին նվիրված մեր մեկ ուսումնասիրության մեջ կրսեինք մենք ալ. «Բայց ինչ որ Պեշիկթաշլյանի մեջ անմոռանալի կընե մարդը, իր մտահոգությունն է հայ ժողովուրդը միացած տեսնելու: Միության երգին է ան: Ան աչքերը բացավ թունավոր մթնոլորտի մը մեջ՝ երբ հայ ժողովուրդը կկրժեր պառակտումի դժն որդը: Հայ ազգը բաժնված երեք կրոնական հարանվանություններու, քեն ըրած էր եղբայրը եղբոր դեմ: Միևնույն ցեղին զավակները զիրար չէին սիրեր, ու կնախատեին զիրար: Այդ օրերուն հայտնվեցավ Պեշիկթաշլյան ու երգեց իր համբավավոր «Եղբայր եմք մեք»-ը: Ան սիրո հրավիրեց թշնամի եղբայրները:

... Պեշիկթաշլյան միայն երգով չբարոգեց եղբայրությունը: Ան և փորձեց կյանքի մեջ ստեղծել զանիկա: Ինքն է գլխավոր ախույաններեն մեկը այն պայքարին, զոր հայ կաթոլիկ մտավորականությունը մղեց Հասունի լատինամով ձգտումներուն դեմ, որոնք կփորձեին լայնացնել խրամատը միևնույն ցեղին այլադավան զավակներուն միջև: Ու ինքն է դարձյալ գլխավոր հիմնադիրներեն մեկը Համազգաց ընկերության, որ առաջին փորձը ըրավ զանազան դավանանքներու մտավորականությունը գործակցության կանչելու կրթական աշխատանքներու մեջ»:

Օրմանյան, խտացնելով Հասունի շարաշուք դերը այդ բոլոր անցուդարձերուն մեջ, կըսե. «Հասունյան քաղաքականության մեծ նպատակն էր հայ կաթոլիկ հասարակության մեջեն բնաջինջ ընել ինչ որ հայություն հետ վերաբերություն և կապակցություն ունի, և անոր տեղ հոռմեական և լատինական ձեներն ու կերպերը հաստատել, անհետ ընել ինչ որ բուն հեյ, և ամբարցնել ինչ որ զուտ կաթոլիկ է: Սակայն նպատակը իրագործելու համար արգելքներու կհանդիպեր, և պետք էր անոնք տկարացնել, եթե ոչնչացնելու հնաշ շրջար: Արգելքներու գլխավորը հասարակության կողմեն էր, որուն մեծամասնությունը կամ մի լավ մասը չէր մերկացած ինչ որ ավանդաբար ուներ յուր միտքին և սիրտին մեջ իբրև հայ, որչափ ալ կաթոլիկությունը ընդունած էր, և կպահանջեր աշխարհական տարրին եկեղեցական գործերու մասնակցությունը, և ընտրողական և մատակարարական ու վարչական պարունակներու մեջ

<sup>5</sup> «Աղղապատում», Գ, էջ 3823:

<sup>6</sup> Վ. Պարտիզոնի, «Հայ գրականության պատմություն» Երևան, 1951, էջ 410:



ձայն և իրավունք ունենալ: Հասուն հիմնվելով պապական անպայման իշխանության կաթոլիկ գաղափարին վրա, կջանար պապի անունով խափանել ինչ որ հնավանդ հայության զգացումն կծագեր, և կջանար աշխարհական տարրը հիմնովին հեռացնել եկեղեցական և ազգային գործերին, և ամենայն ինչ եկեղեցականներու և եկեղեցական իշխանության ձեռքին ներքև առնել<sup>7</sup>:

Հասուն ուժեղ թշնամի մը ուներ նաև հանձին Մխիթարյաններուն. «Ենդրնդոտ մըն ալ Վենետիկ Մխիթարյան միաբանությունն էր, որ Մխիթարեն ժառանգած զգացումը տակավին այն ատեն վառ կպահեր, և ինչպես քանիցս առիթը ունեցած ենք կրկնել, հայությունը կաթոլիկության պատվաստելու գաղափարով կորոշվեր, որ թեպետ մեր տեսությունը անհնարին էր, սակայն Հասունի աշխարհ կարեկրությունն ուներ, զի նա երեակայական խոշորագույններն իսկ յուր առջևն հեռացված տեսնել կրաղճար»<sup>8</sup>:

Վերջնական հարվածը տալու նպատակով Մխիթարյաններուն, Հասուն հանձնաժողով մը կկազմե խմբագրելու և Պրոպագանդայի ատյանին ներկայացնելու համար իտալերեն

գրքույկ մը, որ գաղտնի կտպագրվի 1852 հունիսին և որ Պարսավազիբ կամ Չարամաշյան կոչված է, թեև գրքույկին բուն տիտղոսն է «Վենետիկոյ Սուրբ Ղազարի Մխիթարեանն»: Մոտ 200 էջե բաղկացած այս հատորին մեջ Մխիթարյանները կատարյալ կաթոլիկութեն հեռու և իրենց հավատքին մեջ կեղծ ցույց կտրվին, Մխիթարյան մեռած վարդապետներն ու արքայադերձներն սենյանց նման հերետիկոս և հերձվածող կանվանվին, իսկ ողջերը կթելադրվի հավատաքննական ատյաններով դատապարտել, անոնց հետևողներուն հոգիներու փրկությունը տարակուսական, և անոնց պաշտած խորհուրդներուն արդյունքը երկրաշարժի ցույց տրվելով: Մխիթարյան վարչության ներքև եղող Մուրաաշյան և Ռաֆայելյան վարժարաններու աշակերտները կմատնանշվին անկրոն և անհավատ, իսկ միաբանությունը անբարեհույս քաղաքական տեսակետով ալ իբրև ջանադիր Հայ ազգը ապստամբեցնելու, ի գլուխ ունենալով Տյուզյան գերդաստանը: Ի վերջո պետքը ցույց կտրվի միաբանությունը ջնջելու և վանքը քանդելու<sup>9</sup>:

## 8. ԼՈՒԾԸ ԹՈԹՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հասուն իրավունք ուներ ժանիք սրելու Անտոնյան միաբանության դեմ ևս: Հակահասունյան միջնաբերդը Անտոնյան միաբանությունն էր: Բայց այդ միջնաբերդին ամենեն տոկուն ռազմիրան երիտասարդ Օրմանյանը պիտի հանդիսանար, և հետևաբար ամենեն ավելի խրոխտ ան պիտի կանգներ Անտոն Հասունյանի դեմ:

Աղով՝ նոր շրջան մը կրացվեր Օրմանյանի կյանքին մեջ, պաշարի շրջանը, որ կոչված էր ճակատագրական ըլլալու իրեն համար ալ:

Մոտ տասնհինգ տարի Հոռմի վանքը մնալի հետո, Մաղաբիա վարդապետ Օրմանյան Պոլիս կմեկներ 1866 հունվարին, երբ արդեն խմորումը լայն ծավալ ստացած էր հայ կաթոլիկ հասարակության մեջ: Ծակատագիրը Պոլիս կղրկեր զայն, որպեսզի գործոն դեր ստանձնե պայքարներուն մեջ, որոնք հետզհետե պիտի թափ առնեին:

Շնոր ասպարեզ կրացվեր առջևս Կոստանդնուպոլիս գալովս, — կպատմե Օրմանյան, — զի Անտոնյանց միաբանական ընդհանուր գործառնությունը հետ հայ կաթոլիկ հասարակության հանրային գործերուն ալ կսկսեի միջամտել արբահոր քարտուղարության պաշտոնով, որուն կկոչվեի հասնելուս

երեք օր ետքը՝ փետրվար 8-ին», ճիշտ այն պահուն, երբ Վատիկանը Անտոնյան միաբանությունը «իրբև ըմբոստ կհամարեր և կհանդիմաներ»<sup>10</sup>:

Օրմանյան Հոռմ կանչվեցավ: Հետևաբար Պոլսեն մեկնեցավ 1867 սեպտեմբեր 20-ին. «... Հոկտեմբեր 15/27-ին Հոռմ հասանք: ... Պրոպագանդայի վարչությունը ամբաստանությանց և պահանջից երկար ցուցակ մը հաղորդեց, որոնք ցրելու և պատշաճ բացատրություններ տալու և ներկայելու համար բաղմաթիվ և ընդարձակ գրությունց պետք եղավ, որոց խմբագրությունը ինձի կպատկաներ Հ. Դավիթ Զրաճյանի ընկերակցությամբ»<sup>11</sup>:

Օրմանյան հոգով-մարմնով նվիրվելով հանդերձ իր միաբանության շահերուն պաշտպանության, կշարունակե մյուս կողմի իր ընդհատված ուսումը, և աստվածաբանական կաճառին անդամ դառնալու համար պահանջված քննությունները, ինչպես նաև հայերենի ուսուցչությունը Պրոպագանդայի դպրանոցին և դասավանդությունները վանական վարժարանին մեջ:

<sup>9</sup> Հ. Պողոս Պոյնուէրիյան, «Հասունյան քաղաքականություն», Թիֆլիս, 1868, էջ 165—166:

<sup>10</sup> «Եռոց և խոսք», էջ 57:

<sup>11</sup> Անդ, էջ 60:

<sup>7</sup> «Ազգապատում», Գ, էջ 3923—3924:

<sup>8</sup> Անդ, էջ 3924:



Օրմանյան իր վերջին քննությունները կըրացներ, և 1868 օգոստոս 20/1 սեպտեմբերին կստանար եկեղեցական իրավագիտության մագիստրոսի աստիճանն ու օրհնությունը, հռչակվելով այսպես երիցս մագիստրոս փիլիսոփայության, աստվածաբանության և եկեղեցական կանոնագիտության, իսկ երեք օր հետո, նոր քննությամբ, կընդունվի Աստվածաբանական կաճառին կաճառորդ (ակադեմիկոս)։

Հոռմեն Պոլիս դառնալով 1868 հոկտեմբեր 25-ին, Օրմանյան կվերստանձնե նախկին աշխատանքները՝ արբահոր քարտուղարությունը և ուսուցչական պաշտոնը Անտոնյան վարժարանի մեջ։ «Մեր հաջողությամբ Հոռմեն դարձր և Հասունի Հոռմի կողմն դիտողությանը ենթարկվիր զեպ առ մեզ նպաստավոր ազդեցություն գործած էր Հասունյանի անձին և իրեն շրջանակին վրա», — կգրե Օրմանյան<sup>12</sup>։

Օրմանյան գործոն դեր կստանձնե նաև եպիսկոպոսական ժողովին մեջ, որ բացվեցավ 1869 հուլիս 5/17-ին, Հասունյանի նախագահության տակ, և մասնակցությամբ հայ կաթողիկ բոլոր եպիսկոպոսներուն, մեջն ըլլալով նաև Վենետիկի և Վիեննայի արբահայրերը։ Բացի ներկա եպիսկոպոսներեն, ութ հատ խորհրդական վարդապետներ և վեց հատ խմբագիր քարտուղարներ անվանված էին, և Օրմանյան երկու խումբին մեջ ալ կար։

Հոռմի մեջ 1869 նոյեմբեր 26/8 դեկտեմբերին վատիկանյան ժողովը կբացվեր «Տիեզերական ժողով» անվան տակ, թեև միմիայն կաթողիկ եպիսկոպոսներու մասնակցությամբ։ Ժողովին լեզուն լատիներենն էր, և եպիսկոպոսները արտոնված էին խորհրդական թարգման մը ունենալ։ Օրմանյանին առիթ կտրվեր այս կերպով ընկերանալ Գաղանձյանին և ժողովին մասնակցի։

Մինչ, սակայն, բոլոր կաթողիկ հայ եպիսկոպոսները Հոռմ հավաքված էին, Պոլսո հայ կաթողիկ հասարակության ծոցին մեջ պոռթկաց շարժում մը, որ ծանոթ է Հակահասունյան շարժում անունով։

Ուրախացած այս անակնկալեն, Հոռմ գտնվող Անտոնյան խումբը իսկույն գաղտնի կապ հաստատեց Պոլսո պարագլուխներուն հետ, ինք ալ Հոռմեն աջակցելու համար առնց։

Վատիկան, սակայն, տեղեկացած Անտոնյաններու կապերուն Պոլսո ըմբոստներուն հետ՝ իսկույն հալածանքի սկսավ Հոռմ գտնվող միաբանության անդամներու դեմ։ Վանքը շրջապատվեցավ լրտեսներով և ծպտյալ ոստիկաններով, և մյուս կողմն մի-

ջոցներ ձեռք առնվեցան Պրոպագանդայի կողմն վանական ներքին վարչությունը ջրնջելու և լատին կրոնավոր մը Անտոնյանց վանքի կառավարիչ նշանակելու։

Օրմանյան և Զրաճյան պայքարի կձեռնարկեն իսկույն։ Օսմանյան դրոշը կպարզեն վանքին վրա, և կմերժեն օսմանյան հպատակ հաստատություն մը օտարազգի մը հանձնել։

Հոռմ սակայն տեղի չի տար։ «Պապին կողմանե եկեղեցիինս արգելքի ներքև կզրվի, թեպետ չենք անսար, — կպատմե Օրմանյան, — ոստիկանական հսկողությունը կբարդվի, թեպետ ձեռնագրով են կզգուշանան, վերջապես բացառիկ դրություն մը կստեղծվի, զոր դժվար էր պաշտպանել, և բռնադատական ձեերու վախը ժամե ժամ կշատնար»<sup>13</sup>։

Անտոնյան միաբանության երեք անբարեհույսերը՝ արբահայր Սուքիաս Գաղանձյան և Օրմանյան ու Զրաճյան վարդապետները 1870 ապրիլ 19/1 մայիսի երեկոյան հաջողեցան խույս տալ պապական սահմաններեն, հազիվ կարենալով ծուղակը չիչնալ, և իրենց շունչը Պոլիս առին, ուր պիտի հասնեին մայիս 17/29-ին։

Հիմա ալլես Վատիկանի դեմ իր պայքարը բացելեաց սկսած էր Օրմանյան։ Առաջին հերթին անհրաժեշտ էր հանրային կարծիքը լուսաբանել։ Մեկ կողմն հայ և ֆրանսերեն թերթերու մեջ բացատրական հոդվածներ կհրատարակեր հայ կաթողիկ տազնապին մասին, և մյուս կողմն խմբագրեց և 1870 օգոստոսին լույս ընծայեց «Հայ արևելյան կաթողիկյան» խորագրով ստվար տետրակը, որ Հոռմի և Պոլսո անցուղարներուն նկարագրությունն է։

1871 ապրիլ 29/11 մայիսին Օրմանյան դարձյալ Հոռմ է, այս անգամ արդեն հաշվեհարգարի ենթարկելու համար Անտոնյան վանքը, զոր անկարգ և խառնափնդոր վիճակի մեջ թողեր էին իրենց փախուստին առնին տարի մը առաջ։

Քանի մը ամսվան համար Հոռմ մեկնած, Օրմանյան հինգ ամբողջ տարիներ ստիպված եղավ սակայն հոն մնալ։ Համառ և երկար ճիգեր պետք եղան Անտոնյան միաբանության զույքերը փրկելու համար։

Ու ճիշտ այդ շրջանին էր, որ ան վարեց իր բուն պայքարը Վատիկանի դեմ։ Եվրոպայի հանրային կարծիքը լուսաբանելու համար հայ կաթողիկ հասարակության ծոցին մեջ տեղի ունեցող զեպերուն և պապին բռնած ընթացքին մեջ, ան օգտագործեց մա՛մուլը առաջին հերթին։ Հոդվածներ տեղացուց մեկ կողմն Պոլսո թերթերուն, մյուս

<sup>12</sup> «Խոհճ» և «խոսք», էջ 63—64։

<sup>13</sup> Անդ, էջ 68։



կողմն եվրոպական մամուլի շատ մը կա-  
րևոր օրգաններուն:

Դարձյալ այս շրջանին է, որ ան լույս ըն-  
ծայեց մասնավոր տետրեր ալ, որոնցմէ հի-  
շենք «Ռեվերսուրուս կամ Հայեր և Պապու-  
թյուն», որ խոսքերն լույս տեսաւ 1872 հո-  
նիսին, և «Արեւելեան կաթոլիկաց կրօնական  
ազատութիւնը և քաղաքական իրավունքնե-  
րը» ֆրանսերէն գրքույկը, որ տպւեցաւ նույն  
տարւան սեպտեմբերին: Բայց այս շրջանի  
իր հրատարակութեանց ողնասյունը կկազմէ  
«Վատիկան և հայեր» ֆրանսերէն ստվար  
հատորը, որ 1873 օգոստոսին լույս տեսաւ և  
զոր խմբագրեր էր արբանջայր Գազանճյանի  
հրավերով, Վատիկանի և հայոց վեճը լու-  
սաբանելու համար իր հիմնը:

Իր օրերուն մեջ ավելի քան հանդգնութիւն  
էր պայքարը, զոր Օրմանյան բացած էր Վա-  
տիկանի դեմ, երբ դեռ կաթոլիկ հոգևորակա-  
նի տարազը կկրէր իր վրան: Իր հրատարա-  
կութիւնները բավական էին զայն հալածանք-  
քի նշավակ դարձնելու համար: «Էլրատարա-  
կութիւն»ս դեմ հերքում չգրվեցաւ,— կըսէ Օր-  
մանյան,— զի բավական ջախջախիչ էին  
նենգամիտ ալլալութեանց և բնագրական  
ճշտութեանց մասին հառաջ բերված հայտ-  
նութիւնները, և պապական առջանք բավա-

կանացաւ զայն արգիլյալ գիրքերու ցանկին  
(ինդեքս) անցունել 1874 հունիս 28/10 հունի-  
սին, վերև հիշված երկու տետրերուն հետ  
միասին: Բայց մերժումը հերքում չէր»<sup>14</sup>:

Երբ 1876 ապրիլ 30/12 մայիսին կմեկնէր  
Հոռմեն ճիշտ հինգ տարի մնալէ հետո հոն,  
արդեն հոգեպես խզված էր ան Վատիկանէն,  
բայց դեռ լրացած չէր նկատուի իր դերը հայ  
կաթոլիկ հասարակութեան մեջ և Անտոնյան  
միաբանութենէն ներս, թեև Հակահասուն-  
յանք սկսած էին տկարանալ հասարակու-  
թեան ծոցին մեջ, իսկ միաբանութիւնը  
տագնապ կանցներ ներքին վեճերու հետե-  
վանքով:

Շուրջ երեք տարին, զոր հայ կաթոլիկ հա-  
մայնքին ծոցին մեջ անցուց Օրմանյան,  
1876—1879, վերջիններն եղան իր տարինե-  
րուն օտար փարախի մեջ: Արդեն հոգեպես  
խզված էր անկէ և առիթ մը կսպասեր ոտ-  
քերուն փոշին թոթվելու համար: Եվ սակայն  
այդ երեք տարիներուն ան շարունակեց գոր-  
ծոն դեր կատարել հայ կաթոլիկ համայնքին  
մեջ, ըլլա պատրիարքարանէն ներս, ըլլա  
միաբանութեան ծոցին մեջ, մասնավորա-  
պէս զարկ տալով կրթական ու մշակութա-  
յին ձեռնարկներու, աշքերը միշտ հառած  
ոսկայն դեպի հայ կյանքը:

## 7. ԵՐԲ ԿԵԼՐՏԻ ՀՈԳԻՆ

Հասուն անհատ մը չէր: Ան խորհրդա-  
նշանն էր շարաշուք մտայնութեան մը, որ  
կծգտեր հայ կաթոլիկ հասարակութեան մեջ  
չբացնել հոգեկան վերջին կապերը մայր  
ժողովուրդին հետ, դավանանքը դարձնել  
մարդոց հիմնական ոգին՝ ազգային զգացում-  
ները տակաւ խամբեցնելով անոնց մեջ, Հոռ-  
մի հետ մարդոց կապը գերազույն նպատակ  
հանդիսացնել՝ կամքի և գիտակցութեան ա-  
մեն նշույլ մարելով լայն խալիքու հոգինե-  
րէն ներս, մեկ խոսքով՝ հայ կաթոլիկէ հա-  
սարակութեան տեղ կաթոլիկ ուրույն ազգ  
մը ստեղծել:

Հասուն և իր անմիջական համախոհները  
այս խտաւոր մտայնութեան սերմը նետե-  
ցին. սերմը պիտի ուռճանար տակաւ, և ի-  
րավ հասունար տակաւ՝ «կաթոլիկ միլլե-  
թի»-ն: Մենք զայն հասունցած տեսանք մեր  
օրերուն: Միթիթարյանց շունչին տակ սնած և  
հայ ավանդութեանց հավատարիմ զանգվա-  
ծի մը կողքին, որուն ներսը երեք շթոշնե-  
ցաւ հայ հայրենասիրութիւնը, ուրիշ զանգ-  
ված մըն ալ կար, որ իր հայ ծագումէն ար-  
դեն կամչնար: Հայ լեվանտեան տիպարն էր,  
որ ստեղծված էր, սրտով ու լեզվով և ավան-  
դութիւններով արդեն հեռացած մայր զանգ-  
վածէն:

Մանոթանալէ հետո պայքարներուն, որոնք  
տեղի ունեցան հայ կաթոլիկ հասարակութեան  
ծոցին մեջ անցյալ դարու կեսերէն հետո և  
դերին, զոր Օրմանյան ունեցաւ անոնց մեջ,  
զժվար չէ ընթերցողին համար ըմբռնել այն  
խոր բեկումը, զոր պիտի կրէր երիտասարդ  
հոգևորականը, տեսնելով Հոռմի և իր ար-  
բանյակներուն անփառունակ կեցվածքը իր  
հայրենի ավանդութեանց պահպանման հա-  
մար պայքարող ժողովուրդի մը հանդեպ և  
անոնց սադրանքները՝ ջլատելու համար  
զայն իր անհավասար պայքարին մեջ:

Մոտեն ծանոթացած կաթոլիկ Եկեղեցի-  
վարած դարավոր քաղաքականութեան ուրիշ  
կեկղեցիներու հանդեպ, և այն փորձերուն,  
զորս Հավատո տարածումը կատարած էր  
Հոռմի իշխանութեան ենթարկելու համար  
զանոնք՝ խտիր շղնելով միջոցներու միջև,  
երիտասարդ այդ հոգևորականը չէր կրնար  
պժգանքե տարրեր զգացում կուտակել իր  
ներսը, տեսնելով մանավանդ այն տիպո-  
ղերը, զոր Վատիկան կատարած էր հայ ժո-  
ղովուրդին ճակատագրին մեջ և կկատարէր  
հիմա՝ մանավանդ, երբ այդ ժողովուրդը որևէ  
ատեն ավելի կարոտ էր իր հոգեկան միա-

<sup>14</sup> «Խոհ» և «խոսք», էջ 82:



թյան՝ ազգային վերածնության իր նոր թափին մեջ:

Խոռվեր իր ներսը սպրդեր էր ուրեմն առաջին իսկ օրեն, դեռ դպրոցական գրասեղաններու վրա: Ուշիմ պատանիի մը համար, որ Օրմանյանն էր եղեր, և թանձր այն մթնոլորտին մեջ, զոր ան կընչեր շուրջը, չէր կրնար իսկույն շխմորվիլ հակազդեցությունը:

«Առաջին միտքը ծագած է հիս,— կգրեն ան,— նույնիսկ ուսանողությանս օրերեն, քանի տեսած և ուսած եմ հոռմեադավանության քաշկոտուք պատճառաբանությունները, նախապաշարյալ տեսությունները, այլալայլ մեկնությունները: Այս կետը այնչափ հայտնի էր, որ դպրոցական վարժություններու մեջ, զուտ հոռմեական վարդապետություններու դեմ բուռն առարկություններս, դասընկերներուս ալ դիտողության առարկա եղած էին, որով սովոր էին կրկնել, թե հերձվածող մը (scismatico) ըլլալս կտեսնելի, զի անոնց աչքին ամեն արեւելցի ուղղադավան չէ, զի հոռմեական չէ: Քանի դասարաններու մեջ հառաչեցի, այդ ըմբռնումն ալ աճեցաւ: Սույն աճումին հետզհետեւ ուժ տվին հոռմեական պատմության կամ պապական վարչության կողմն նախ հայ Անտոնյան միաբանության, և հետո հայ կաթողիկոսականության հանդեպ բռնված ընթացքները, և զանոնք օտարացնելու և լատինության ձուլելու համար կատարված գործողություններն ու բռնադատիչ միջոցները, միշտ կաթողիկոսական պահանջից պատրվակին ներքե: Ասոնք իմ վրաս շատ ներգործեցին, և աշակերտական միջոցիս ստացած տեսությունները զորացուցին»<sup>15</sup>:

Հոգեկան տազնապը հետզհետեւ ավելի ևս պիտի հասուննար իր մեջ՝ քանի վատիկան պիտի խստացներ իր մեթոդները հայ ժողովուրդը խլելու համար իր ավանդություններն: Կանխահաս իմացականությամբ օժտրված երիտասարդ հոգևորականի մը համար, որպիսին Օրմանյանն էր եղեր և պայքարներու խմորման մեջ, ուր այլևս դիմակ չունեին Հռոմի գործակալները, անհնար էր ավելի պաղարշուն մնալ:

Օրմանյան, պատմելով Հասունյանի կաթողիկոս Հռչակվիլը Հռոմի մեջ և հաղթական Պոլիս դարձը 1867-ին, կգրեն. «Եղելությունները հառաջ բերի իրենց ցամաք մերկության մեջ, սակայն զգացումներն են, որ դիպվածները կհոգեւորեն: Իմ զգացումները այդ ժամանակամիջոցին մեջ մեծ փոփոխություններ ստացան, վանական անձուկ շրջանակեն և ուսումնական վերացյալ պարունակեն դուրս ելլելով հանրային և իրավասական միտքեր դարձուցին, դրական և

գործնական ասպարեզ գտան, և թեպետ հայ կաթողիկոսության սեղմ սահմաններով փակված, սակայն սկզբունքներու սերմերը ընձեռեցին, և տակալ աճելու ճամբան դուրացուցին: Կրնամ համարձակ հայտարարել, թե ապագա գործունեության հիմերը այդ ժամանակամիջոցին մեջ դրվեցան, և հոռմեադավանության հանդեպ զգացած տեսական երկմտությունը գործնականի և իրականի սկսավ վերածվիլ»<sup>16</sup>:

Պապական անսխալականության գաղափարը, որ այդ օրերուն նորեն կարծարծվեր, արդեն պիտի խորացներ ճեղքը իր ներսը և պիտի մղեր զինք դիրք առնելու: Պիտի չուզեր իր համոզումները լիկել իր ներսը, երբոր գիտեր, թե ի վիճակի չէ զանոնք պոռալու: Եվ մյուս կողմն անհնար էր զանոնք պոռալ վատիկանի քիթին տակ, երբ Հռոմի պահակները ամեն վարկյան կրնային ձայնդ խեղդել:

«Այդ օրեր,— կրսե Օրմանյան,— պապական անսխալության խնդիրը արդեն ձեռք առնված էր, և գաղղիացի ու գերմանացի եպիսկոպոսներ բուռն պայքար կմղեին զայն խափանելու համար. [Հռոմի] գաղղիական դեսպանատունն ալ զանոնք կհովանավորեր, և արևելածես եպիսկոպոսներն լավ մաս մը անոնց համամիտ էր: Պապության անտեղի ձգտումներուն դիմադրող եպիսկոպոսներուն հետ արդեն մենք ալ հարաբերության մեջ էինք, ուստի խորհրդակցելու և մեզի օգնականներ ճարելու համար Չրաճյան և ես փոփոխակի բացակայությամբ տեսակցությանց կհաճախեինք, տեղեկություններ կբաղեինք, բռնվելիք ուղղության վրա հրահանգներ կփնտռեինք: Բարեբախտաբար պապական իշխանությունը դեռ կհապաղեր արտաքին բուռն միջոցներու ձեռնարկել, թեպետ կասկածն ու վախը օրրստօրե կաճեին, և մեր խորհրդատուները [Հռոմեն] հեռանալն դատուրիշ ապահով միջոց չէին թելադրեր»<sup>17</sup>:

Հայածանքը, զոր վատիկան սարքեց իր լուծին չհանգուրժող այս հոսանքին դեմ, ճակատագրական դեր կատարեց Օրմանյանի ներսը առաջ բերելու համար վերջնական փուլգումը: Օրմանյան տեղյակ էր Հռոմի զորության և գիտեր, թե անհատական ուժերով կարելի չէր անոր դեմ մաքառիլ: Երբ մարդ կզգա իր անզորությունը, հաճախ ավելի բուռն կզառնա իր սրտմտության մեջ:

Օրմանյան միշտ նույն ցատկով կհիշե այդ ճակատագրական վայրկյանները. «Եղելությանց ցամաք պատմությունն ալ կբավե հետեցնելու, թե ինչ տխուր և հակակիր զգացումներ պետք էր դարձնուին իմ

<sup>15</sup> «Խոռք և խոսք», էջ 4:

<sup>16</sup> Անդ, էջ 59:

<sup>17</sup> Անդ, էջ 69:



ներսս Հոռմի ու հոռմեադավանության հանդեպ, և ինչպես պիտի զորանար անոր հանդեպ կանուխեն սկսած վարանոտ և անվստահ գաղափարը: Պապության հալածանքին ներքև անցուցած օրերնիս, ծակամուտ տեղեր ննջել կպարտավորվինք, անակնկալ հարձակումներու և բռնություններու շենթարկվելու համար: [Անտոնյանց արբահայր] Գաղանճյանի գիշերախառն Պրոպագանդայի կոչվելուն առթիվ, փոխանորդարար ևս երթալու ստիպված, վերա-

դառնալուս անստուգությամբ կմեկնեի, և իրոք ալ թակարդի կեցած ոստիկանները աչքովս կտեսնեի: Ներհակ կիրքերը տակավ կաճեին, բայց պարագաներ վերջնական որոշման նպաստավոր չէին՝ միաբանության գործերու և հասարակության օգուտին տեսակետով, դործելի ինքզինքս ազատ չէի սեպեր, և չէի կրնար ալ սեպել»<sup>18</sup>:

Այս կերպով էր, որ առաջ եկավ բեկումն: Օրմանյանի մեջ: Այլևս իմաստ չունեի տատանիլ:

## 8. ՀԱՅՐԵՆԻ ԲՈՒՅՆԸ

Խորեն ղննած հայ ժողովուրդի դարավոր պատմությունը իր փառավոր թե տխուր բոլոր հանգրվաններուն մեջ և դերը, զոր Հայ Եկեղեցին կատարած էր այդ բոլոր հանգրվաններու ընթացքին, երիտասարդ հոգևորականը չէր կրնար համակրությամբ չլեցվիլ դեպի առաքելությունը, զոր ստանձնած էր Հայ Եկեղեցին՝ մասնակցելով հայ ժողովուրդի դարավոր ճիգին լուսին հասնելու համար, և անոր մղած պայքարներուն՝ որպեսզի կարենա տոկալ բոլոր փորձությանց ու աղետներուն:

Ի՞նչ դժվար բան կար բացառիկ իմացականության մը համար, որ, երիցս մագիստրոս, կրցեր էր կրոնքները ուսումնասիրել իրենց նկարագրին ու պատմության մեջ, և որ, չկաշկանդվելով իրեն պարտադրված հոգեկան կապանքներուն մեջ, կրցեր էր հորիզոն բանալ իրեն, տեսնել լայնախոհ ոգին, որ իր մեջ կրցեր էր պահպանել Հայ Եկեղեցին, և գերազանց բնութիւն անոր վարդապետությանց:

Հանկարծակաւ ժեստ մը չէր ուրեմն Օրմանյանի դարձը դեպի Հայ Եկեղեցին, և ոչ ալ արդյունքը վայրկենական բռնկումի մը, ինչպես եղած են շատ մը դարձեր իրմն առաջ ու իրմն հետո: Ան հոգեկան երկար խոսքներու և ներքին բուռն պայքարներու հետևանքն էր, որ խմորվեցավ և հասունցավ հանգրվանն հանգրվան, հարմար պահուն պոռթկալու համար:

Հաղվադեպ են դարձերը դեպի Հայ Եկեղեցին: Հայ Եկեղեցւոյ ծոցն բաժնված են խումբերով, որովհետև կաթոլիկներն ու անոնցմէ հետո բողոքականները հազար խայծեր ունեցած են թշվառներու միամտությունը գնելու: Հայ Եկեղեցին այդ խայծերը չէ ունեցած երբեք, ու հայ հոգեվորականներուն պակասած է ունիթոնին ու միսիոնարին ճարտարությունը՝ ետ բերելու համար անոնց ձեռքով մոլորածները:

Եվ սակայն եղած են Հայ Եկեղեցին վերադարձողներ, Օրմանյանի խումբին առաջ

և նաև հետո: Ոմանք իրենց խղճմտանքին մեջ ցնցված՝ փախած են օտար փարախեն ու Մայրենի Եկեղեցին դարձած տարբեր ատեններ ու տարբեր պայմաններու մեջ: Ասոնց մեջ եղած են մարդիկ ալ, որոնց անունը գուրգուրանքով կպահ հայ մշակութի պատմությունը, ինչպես Մատթիա Գարագաշյանը, Նորայր Բյուզանդացին, Սուբիաս Պարոնյանը և այլն, որոնք կաթոլիկ վարդապետներ էին նախապես:

Խմբական դարձ մը ևս տեղի ունեցած է Օրմանյանին բավական առաջ, 1856-ին, Միխիթարյանց ծոցին մեջ բռնկած վեճերու հետևանքով, մեկը այն վեճերն, որոնք հաճախ խմորված են նույն միաբանութենէն ներս, ոմանք խեղդվելու համար իսկույն, ոմանք պայթելով իբրև տեսակ մը հասունցած պալար: Գրեթէ միշտ նույնն է եղած վեճերուն առիթ դարձող դժգոհությունը՝ մինչև ո՛ւր պետք է հասցնել ստրկամտությունը: Այս անգամ վեճերը բռնկած էին Փարիզի Մուրատյան վարժարանի հետ կապված հարցերով, որոնց մեջ դեմ-դեմի եկած էին միաբանությունը ղեկավարությունը՝ հանձին արբահայր Գևորգ Հյուրմյուզլի, և վարժարանը ստեղծող և վարող երեք կարկառուն դեմքեր՝ Հ. Սարգիս Թեոդորյան, Հ. Գաբրիել Այվազովսկի և Հ. Ամբրոսիոս Գալֆայան: Զկրնալով հանդուրժել իրենց պարտադրված ոեծիմին, միաբանութենէն բաշխված և Հայ Եկեղեցւոյ գիրքը դարձած էին երեք վարդապետները, որոնց շուտով միացած էր Հ. Խորեն Գալֆայանը, միաբանությունը ղրկելով այսպես իր ամենն աչքառու անդամներին: Տարբեր խնդիր, որ վերադարձողները չկրցան արժեքնել հետագային իրենց ղիրենք Հայ Եկեղեցւոյ ծոցին մեջ, հակառակ ի սկզբան իրենց տված հույսերուն և նաև ունեցած գործունեության: Սարգիս Թեոդորյան աննշմար մնաց հետագային: Ամբրոսիոս Գալֆայան սքեմը

<sup>18</sup> «Խոհ» և «Խոսք», էջ 70:



ձգեց իսպառ՝ վերածվելու համար իշխան Գրիգորին Լուսինյանի, Գաբրիել Այվազովսկի դեր կատարեց և դիրք գրավեց, ճիշտ է, Հայ Եկեղեցվո մեջ հասնելով մինչև արքեպիսկոպոսության, բայց իր անունը կապելով տխուր դերի մը ևս, զոր ունեցավ ցարական հալածանքներուն մեջ ընդդեմ Միքայել Նալբանդյանի, իսկ չորրորդը՝ Խորեն Գալֆայան, Խորեն Նարպեյ Լուսինյան դարձած, բանի մը տասնյակ տարի իր գործի, հետտորի, լեզվագետի բացառիկ ձիրքերը արժեցուց հայ կյանքի մեջ, իբր պատվիրակ Բեռլին իսկ երթալով 1878-ին, անփառունակ վախճան մը ունենալու համար սակայն ի վերջո:

Օրմանյան փառք փնտնելու չէր գար Հայ Եկեղեցվո ծոցին մեջ: Փառքի համար Հոռոմի մեջ լայն ասպարեզ կար իրեն, ու վերելքի անսահման հնարավորություններ: Սակայն մեծ ժեստերը իրենց զրդապատճառը միշտ ունին: Օրմանյանի քայլը բնական ելքն էր պայքարին, զոր ան կմղեր տարիներ ի վեր և որ վերջ ի վերջո ստիպված էր ջլատվիլ, որովհետև ան կմղվեր անհավասար ուժերու միջև: Երբ Օրմանյան անհավասար այդ կոնֆլիկտ կմղեր, գիտեր, որ իր ուժերը պիտի չբավեն լեռ մը սարսելու համար, բայց ան վճռած էր երբեք չկասիլ:

Եվ իրապես ան կանգ չառավ: Հոռոմը կրնար իր ուժերը զգետնել հայ կաթոլիկ համայնքի ծոցեն ներս իր բացած պայքարին մեջ: Բայց ան չուզեց թույլ տալ, որ պեսդի իր համոզումները ևս զգետնեն: Ան վճռած էր զանոնք անաղարտ բերել Հայ Եկեղեցիէն ներս:

Ինքն է, որ կպատմե ճակատագրական պահը. «Գրություն հանդիպողներուն հայտնի եղած է այլևս, որ իմ Հակահասունյան խնդիրին մասնակցիլս նախաշավիղ մըն էր ավելի առաջ երթալու, սակայն առանց գործը դահավիժելու, այլ աստիճանաբար հառաչելու պայմանով: Այդ էր նպատակս, երբոր Հոռոմ եղած ատենս իմ հրատարակությանց գլխավորները փութացած էի հղել ներսեն վարժապետյան պատրիարքին, որ յուր պաշտոնավարության առաջին օրերեն հռչակ հանած էր, և Հայ Եկեղեցվո և Հայ Ազգի պայծառության անձնանվեր աշխատող մը ճանչցված էր: Կոստանդնուպոլիս դառնալիս ետքը ավելի ևս զորացավ այդ միտքս, տեսնելով Հակահասունյան

հասարակության անկումը. [հայ կաթոլիկներու] պատրիարքը ապիկար և յուր կոչման անգիտակ, կաթողիկոսը խոր և անգործ ծերության հասած, եկեղեցականները նսականություն կուսակցությանց բաժնված, Գաղանձյան և էնֆիյեճյան իրարու ընդդիմամարտ կանգնած, մեծամեծներն ոմանր ասոր կամ անոր կույր կողմնակից եղած, և ոմանք զղվանոք հրապարակե քաշված, ժողովուրդը թուլցած կամ անտարբեր դարձած, և ընդհանուր հասարակությունը Հասունյանի դառնալովը և կառավարական պաշտպանության նվազելովը վարանման մատնված»:

Դժբախտաբար վերջին պահուն տատամսեցան իր հետ վճռական քայլը առնել իր բանի մը ընտիր համախոհները. «Աշխատեցա մեծամեծներեն խոհականագույններուն՝ Հովհաննես Չամիչյանի, Հովհաննես Սազրզյանի, Միքայել Փորթուգալյանի, Կոմիտաս Բեքմեզյանի, և ուրիշներու իմ տեսություններս հաղորդել և գործունեության հորդորել, բայց մեծ ոգևորություն չտեսա. Անտոնյաններն ալ ներքին խնդիրներով զբաղած հասարակության գործերեն ցրտացած գտա»:

Եվ սակայն տատամսելու վայրկյանը չէր. «Ահա թե ինչ տեսություններով նպատակիս ավելի գործնական ձև տալ որոշեցի. Հայ Եկեղեցվո պատկանող ծանոթներու հետ հարաբերությունները շատցուցի, նորեր ունենալու հետևեցա, և ներսեն պատրիարքի մոտենալու համար Հովհաննես Մկրյան ավագերեցին միջնորդությունը պատրաստեցի»<sup>19</sup>:

Իր մեծագույն երազն էր Անտոնյան միաբանությունը հավաքաբար կամ գոնե ընտիր խումբով մը քաշել Հոռոմի փարախեն:

Իզուր անցավ սակայն իր բովանդակ ճիգը՝ իր հետ միասին բերելու համար զայն Հայ Եկեղեցվո գիրկը:

Նախքան Հայ Եկեղեցվո գիրկը դառնալը, Օրմանյան սպասման շրջան մը ապրած է: Տատամսումի շրջան մը չէր այդ, որ վերապահ կդարձնե մարդը վճռական քայլ մը առնել և առաջ: Վաղուց էր վճռած Օրմանյան Մայր Եկեղեցվո գիրկը դառնալ, և այլևս ոչ մեկ բան կրնար կասեցնել զինքը հանդիսավոր ժեստն ընելիս:

<sup>19</sup> «Խոհք և խոսք», էջ 98:



Բայց ան, ատեն մը, սպասած է պատեհ ժամուն: Օրմանյան ինքը կ'պատմե. «1877 փետրվար 11-ին Մկրյան Հովհաննես փոխանորդի առաջնորդությամբ ներսես պատրիարքի կնեղականար, և Հայոց Պատրիարքարանի իրավասության և Հայ Եկեղեցվո անդամակցության անցնելու խնդրանքը կ'մատուցաներ... Գործադրությունը սակայն հետաձգվեցավ նույնինքն Վարժապետյանի հրահանգով, որ գիտակ ըլլալով Հակահասունյանց հասարակության քայքայվելուն և հայոց Պատրիարքարան անցնելու միտումներ սկսած ըլլալուն, բացարձակ կերպով կհրամայեր, թե մենք քեզ կհանձնենք, ուր ալ ըլլա մերն ես, տեղդ նստե և խմորե: Օրմանյանի գրվածներն ու գործերը ներսեսի անձանոթ չէին, և անոնց հիմնվելով էր այդ հրահանգը կուտար»<sup>20</sup>:

Օրմանյան ինքը կ'պատմե դարձյալ, թե Անտոնյան միաբանության մեջ իր պաշտոններն ու աշխատանքները շարունակելով հանդերձ, կ'մասնակցեր նաև հայ կյանքին, մինչ իր անունը հետզհետե ժողովրդական կղաղնար լայն խավերու մեջ:

Առաջին փորձերն մեկը զայն հայ կյանքին կ'ապելու խորեն Նարայեյը ըրավ: Օրմանյան կ'պատմե, թե Նարայեյ, որ Ազգային մատենադարանի համար կ'ազմված ընկերության կնախագահը, Հայկական Կաճառի մը կ'ազմության ալ ձեռնարկեց և զինքը ձև կաճառորդ նշանակեց, և ինք 1877 օգոստոս 8/20-ին բացման նիստին ներկա եղավ: Դե թեպետ ձեռնարկը ոչ արդյունք ունեցավ և ոչ շարունակություն, բայց իր անունը սկսավ խոսվիլ ու տարածվիլ հայկական շրջանակներու մեջ»<sup>21</sup>:

Օրմանյանի անունը «հայ շրջանակներու մեջ ընտանի և ծանոթ դարձնելու» նպատակն ունեցին նաև իր լույս ընծայած հոգվածները «Մասիս»-ի մեջ, և իր խոսած դամբանականը 1878 հուլիս 18—30-ին նշանավոր հանգեւ 2. Կղեմես Սիպիլյանի վրա, որ թեև Վիեննական Միաբանության՝ բայց հակահասունյանց կողմին էր եղած, և որուն վրա Օրմանյան խոսած է «ազգասիրական նպատակով ոգևորված» դամբանական, որ «ճատարակված է «Մասիս»-ի մեջ ալ և արտատպված նաև առանձին:

«Ասկե ետքն էր որ, — կըսե Օրմանյան, — հայոց Պատրիարքարանի մեջ Ազգահամարի

հանձնաժողով մը կ'ազմվեցավ, նույն օրեր սկզբնավորված Հայկական խնդիրին իբրև հիմ ծառայելու համար, և ներսես պատրիարքն ես ալ նույն հանձնաժողովին անդամ անվանվեցա: Արդեն ալ ուղղակի և անուղղակի, բանակցությամբ ու խորհրդակցությամբ, ստեպ ծանոթ խնդիրին մասնակցության կհրավիրվի ներսես պատրիարքն, որուն համակրությունը օրըստօրե կաճեր իմ վրա»<sup>22</sup>:

«Հայ ազգության հետ հարաբերություններու աճելու նպատակով որ պարագա մը եղավ Ազգային մատենադարանի վերատեսուչ անվանիլս 1878 օգոստոս 17/29-ին: Ազգային երեսփոխանությունը Ղալաթի կգումարվեր, և Մատենադարանին սրահի իբրև սպասելու կամ հանգստանալու սենյակ կծառայեր երեսփոխաններուն, ուր ես ալ ներկա գտնվիլ կպարտավորվի, և ազգային նշանավոր դեմքերու հետ շփվելու առիթ կունենայի»:

«Ազգության և հայության շեշտված շարժում մը կտիրեր այն օրեր մայրաքաղաքին մեջ, որուն առիթ տված էր ռուսութուրք պատերազմը և անկե ծագում առած հայության ապագային ակնկալությունը: Այդ կացության հետևանքներն մին ալ թաղերու մեջ լսարաններ կ'ազմակերպվին եղավ, ուր ծանոթ անձեր գրավոր բանախոսություններ կարտասանեին և հայության մասին համարձակ կխոսեին պատշաճից սլահանքը հարգելով: Այդ կարգին ես ալ հրավերներ սկսա ունենալ, և առաջին բանախոսությունը ընթերցա 1879 հունվար 8/20-ին Օրթաքյոյի լսարանը, նյութ առնելով Հայուն անցյալն ու երկայն ու ապագայն, որ լավ ընդունելություն գտավ և «Մասիս»-ի մեջ ալ հրատարակվեցավ: Հետզհետե ուրիշ բանախոսություններ ալ կատարեցի, — Հայության հոգին՝ Իսկուտար, Հայ երիտասարդություն՝ Մամաթիա, Հայ ազգություն՝ Քատրքյոյ, և Կարոտ եմք՝ դարձյալ Օրթաքյոյ, միշտ շեշտյալ հաջողությամբ, և խոսվածները հատուկ տեսրերով հրատարակվեցան»<sup>24</sup>:

Հայոց Եկեղեցվո գիրկը դառնալը հանդիսավոր ձևակերպություն մը պիտի ըլլար միայն: Այլապես Օրմանյան վաղուց էր դարձած հայ ժողովուրդի գիրկը:

<sup>20</sup> «Ազգապատում», էջ 4352:

<sup>21</sup> «Խոսք և խոսք», էջ 100:

<sup>22</sup> Անդ:

<sup>23</sup> Անդ, էջ 101:

<sup>24</sup> Անդ:



## 9. ԳԱՐՁ ԳԵՊԻ ՏՈՒՆ

Օրմանյանի դարձը 1879 հոկտեմբերի 28-ին հանդիսավոր, գրեթե ժողովրդական ցույցի մը կերպարանքն առավ: Իր հետ Հայ եկեղեցւոյ գիրկը դարձան բազմաթիւ հայ կաթողիկէ ընտանիքներ ալ, տոնական օր մը արձանագրելով Պոլսո հայ ժողովուրդի տարեգրութեանց մեջ: Կրօնական պարզ պատահար մը չէր այդ օրվանը, կամ անցք մը մեկ դավանանքէն մյուսին: Ազգային դեպք մըն էր ան ավելի, որովհետեւ հայ ժողովուրդին ծոցէն խլված մասնիկ մըն էր, որ անոր գիրկը կդառնար, հանձն առած չլլալով իր ազգային ավանդութիւնները զոհել օտար հարկի տակ: Յուշ մըն էր այդ օրվանը և միևնույն ատեն խորհրդանշան մը:

Հայ իրականութեան մեջ նման հոծ թիվով ընտանիքներու վերադարձ մը չի հիշվիր դեպի Մայր եկեղեցւոյ գիրկը: Հայ եկեղեցիէն բաժնված են սովար խումբերով, բայց նույն այդ Հայ եկեղեցին ինչպես ըսինք, երբեք չէ ունեցած այն ալլազան խայծերը, զորս գործածած են Հոռմի և հետագային Բայրըլ-Հաուլի գործակալները, որպեսզի ինքն ալ իր փարախը վերադարձնէր իր հոտէն հեռացողները:

Օրմանյանի և իրեններուն գալուտը Հայ եկեղեցւոյ հովանիին տակ՝ բացառիկ էր և բացառիկ ալ մնաց: Հայ եկեղեցին միակ շաղախն էր դեռ այն օրերուն՝ հայ ավանդութիւններով թրծելու համար հայ ժողովուրդի ցանուցրիվ զավակները: Հետագային երբ Հայկական դատը, Հայ Հայրենիքը, հայ մշակույթը գալին շաղախ դառնալու հայ ժողովուրդի զավակներուն միջև, Հայ եկեղեցին Սփյուռքի մեջ էր, որ դեռ պիտի շարունակէր հոգեկան օղակը մնալ անոնց:

Օրմանյանի հետ Մայրենի եկեղեցին վերադարձողներու թիւը ավելի սովար կըլար, եթէ վերջին պահուն տատամսողներ չլլային: Այնուամենայնիւ ան 72-ի հասած էր, որոնցմէ 34-ը Օրմանյանին կրնկերանար Պատրիարքարան ներկայացած ատեն: Ներսէս պատրիարք, եպիսկոպոսներ և վարդապետներ շրջապատված, ջերմ ընդունելութիւն ըրավ նորեկներուն, որոնց կողմէ Մաղաքիա վարդապետ գրավոր ուղերձ մը կարդաց Հայաստանյայց եկեղեցւոյ դավանութիւնն ընդունող, ծանրանալով մասնավորապէս հարանվանական անջատման շարիքներուն վրա: Ներսէս պատրիարք գրավոր պատասխանեց ինքն ալ, ըսելով ի միջի այլոց, թէ իրավ ավելի զարգարուն տուն կրնակիք, բայց ձերը չէր, մինչ այս

համեստ տունը ձերն է: Երկուստեք խոսք առին Հաւ ուրիշներ, որմէ հետո պատրիարքը փխլոն և վեղար նվիրեց Օրմանյանի և զայն առաջնորդեց Մայր եկեղեցի, ուր ծայրագուն վարդապետութեան աստիճան տվավ:

Անշուշտ օրվան պատրիարքին անձն ալ իր դերը կատարեց Օրմանյանի դարձին մեջ: Օրմանյան ինքն իսկ կրսե, թէ առանց Ներսէս Վարժապետյանի գուցէ հնարավոր չլլար իր դարձը դեպի Հայ եկեղեցին: Ներսէս պատրիարքի լայնամիտ ոգին, սրտաբաց կեցվածքը և սիրալիր վերաբերումը երիտասարդ կաթողիկ վարդապետին հանդեպ, և մանավանդ վստահութիւնը, զոր ցույց տվավ դեպի ան, հարթեցին ամէն վարանում,— վստահութիւն, զոր Ներսէս հետո ալ, մինչև իր մահը, ցուցուց Օրմանյան վարդապետի նկատմամբ: «Ներսէսի անձը, վարմունքը, արժանիքը և արդունավորութիւնը լավ մաս մը ունեցած են իմ վերադարձիս իրականացման մեջ»,— Կրսե Օրմանյան<sup>25</sup>:

Օրմանյան իրավամբ կպարծենա, որ այնքան անկեղծ է եղած իր դարձը դեպի Հայ եկեղեցին, որ ոչ ոք եկվոր նկատած է զինքը հետագային, ինչպես նկատված են իրմէ առաջ ու հետո դարձողներ: Եվ իբրեւ ապացույց կհիշե, թէ Պատրիարքարանը երկիցս իրեն իսկ վստահած է առաջըր առնել դավանափոխական շարժումներու, մեկը վանի, մյուսը Ատափաղարի մեջ: Իր նույն այդ անկեղծութիւնը ան ապացուցուց նաեւ հետագային: Իր կապը Հայ եկեղեցւոյ հետ միշտ ջերմեռանդ մնաց, ոչ միայն այդ եկեղեցւոյ ծոցին մեջ իր վայելած փառքի օրերուն, այլ հոն հալածանքի ենթարկված տարիներուն ալ, երբ դառնութեան ճիւղ մը չհանեց, և երբ, ընդհակառակը, հորինեց իր զուգ երկերը ի պանծացումն Հայ եկեղեցւոյ՝ «Հայոց եկեղեցի»-ն և «Ազգապատում»-ը:

Օրմանյան քանիցս առիթը ունեցած է շեշտելու, թէ իր դարձը դեպի Հայ եկեղեցին վայրկեանական բռնկումի մը արդունքը չէր, այլ երկար խորհրդածութեանց արգասիքը, և հետեւանքը ներքին խոր համոզման մը՝ զերծ որեւէ կողմնակի նկատումէ:

Ան կրսե տեղ մը, թէ արկածախնդրութեան բնույթ չունէր իր դարձը. «... Այդ տե-

<sup>25</sup> «Խոհր» և «խոսք», էջ 422:



սակ փոփոխություններ կամ դարձեր, հաճախ բախտախնդրության ձևեր կներկային, և ես ընելի առաջ ալ այդ բանը գիտեի, ուստի աշխատեցա այդ ձևին խուսափել»<sup>26</sup>:

Իսկ այլուր, դարձի սլարագաները պատմելի հետո, Օրմանյան կրսե. «... Այդ ուստոստուն հիշատակները կքաղեմ ցուցնելու համար, թե հոռմեադավանութենն հեռանալու միտքը իմ վրա, ո՛չ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահագրիտության կեղծիք էր, այլ նրկար ատեն խորհված և կշռված, և խոհական քայլերով հառաջացած գործ մը եղած է»<sup>27</sup>:

Ու կրսե ավելի հետո. «... Պատմական պարագաները բավական են հաստատել, թե ինչպես խորին համոզման, հանդարտ կըշտագատության, խելահաս հետապնդության, և կանոնավոր հառաջացման գործ մը եղած է իմ կողմեն Հոռմեադավան Եկեղեցիին հրաժարելով, Հայադավան Եկեղեցվո վերադարձ»<sup>28</sup>:

Օրմանյան անհրաժեշտ գտած է պարզել հոգեկան վիճակը, զոր ուներ դավանանք և համայնք փոխելու և իր պատկանած միաբանութենեն մեկնելու մասին իր տված որոշման առթիվ, և այդ շուրջ քառասուն տարի անոնց մաս կազմելի հետո:

Այդ որոշման և կատարած այս վերադարձիս մասին ավելորդ չլլա, — կրսե Օրմանյան, — քանի մը բացատրության խոսքեր ավելցնել, դավանության և հասարակության և միաբանության տեսակետներ: Ու անմիջապես կճշտե, որ հոգեկան որևէ կապ չկար, որ զինք Կաթողիկ Եկեղեցիին դեռ կապեր:

«Դավանության տեսակետեն արդեն հայտնած եմ, — կրսե Օրմանյան, — թե որչափ կաթողիկ աստվածաբանության խորերը մտա, իմ վրա ձախող տպավորություն գործեցին իրենց սեփական փաստերուն տկարությունները, մինչև իսկ Ավետարանի վկայությանց կամայական մեկնություններ տալ, և սուրբ հարց խոսքերը ուստումներով և զեղղումներով և այլաբանություններով իրենց միտքին բռնադրոսելը: Հետևաբար

ո՛չ մի խայթ և ո՛չ մի խղճի նեղություն չէի կրնար զգալ, և չզգացի անկե բաժնվելով. ընդհակառակը գրավիչ կգտնեի հայ դավանությունը, յուր հնօրյա և պահպանողական լայնամիտ և ազատախոհ սկզբունքներով»:

Բնական կգտնե նաև իր բաժանումը հայ կաթողիկ համայնքեն, որովհետև ծիծաղելի պիտի ըլլար այլապես ավելի երկար մնալ հոն. «Գալով հասարակութենեն բաժնվելուս՝ այն հազիվ թե կարևորություն կրնար ազդել յուր հատվածական և փոքրամասն և անկալ վիճակովը, զոր ոչ իրր նպատակ, այլ առավել իբր ճանապարհ ըմբռնած էի: Արդեն ալ առանց պապի պապականություն և առանց կաթողիկոսության կաթողիկոսություն պահել անհիմն կացություն մըն էր, որ կրնար իսկ անտեղի սեպվիլ, եթե նպատակակետ ընդունվի: Իսկ իմ մեկնելով կացությունը ավելի տկարացուցած ըլլալ պիտի չըսեմ, զի անձնագով չըսվիմ, այլ անկալուն վիճակին պիտի վերագրեմ յուր անվրեպ քայքայումը»<sup>29</sup>:

Դառն եղած է իր բաժանումը Անտոնյան միաբանութենեն, որուն ծոցին մեջ էր աճեր ու գործեր, և որուն հետ կապված էր ուխտով:

«Ավելի մտադրության արժանի էր ձեռնարկս միաբանության տեսակետեն նկատված ատեն, — կրսե Օրմանյան, — զի իբրև ուխտագիր կապ մը կար իմ և միաբանության միջև: Այդ մասին իմ սկզբունքս եղած է անդարմանելի ոչինչ ընդունիլ մարդկային գործերու և ձեռնարկներու մեջ, և հետևաբար նպատակը դադարելն և իրականությունը վտանգելն ետքը, պարտավորությունն ալ դադարած ճանչնալ: Այս կետերը ես նախապես միաբանության և միաբանակից ընկերներուն հաղորդեցի երեք ընդարձակ նամակներով, որոնք ամբողջ պատկերացումը կպարունակեն իմ մտայնության և ժամանակին իրականության: Միաբանությունը վտանգված կամ իսպառ ջնջվելու և կամ պապության ստրուկ մարմին մը դառնալու վտանգին ենթարկված, նյութական միջոցները զրկված, և անկարող վերանորո-

<sup>26</sup> «Խոհք և խոսք», էջ 3:

<sup>27</sup> Անդ, էջ 6:

<sup>28</sup> Անդ, էջ 8:

<sup>29</sup> Անդ, էջ 104:



գելու այն դիրքը, որուն մեջ ես միաբանության անդամակցած էի, ուստի ոչ մի փաստ և ոչ մի հարկ չեն կրնար զիս ստիպել, որ իրեն ավերածին հետ ավերիմ, ոչ ջնջվելուն հետ ջնջվիմ և ոչ ստրկանալուն հետ ստրկանամ»<sup>30</sup>:

Թեև դառնությամբ բայց առանց խղճի խայթի էր, որ կբաժնվեր ուրեմն Օրմանյան Անտոնյաններեն ալ: Չէր գրժած որևէ ուխտ, այլ կթողուր իր դավանանքն ու վանքը, ավելի ևս հավատարիմ մնալու համար սկզբնական իր ուխտին, որուն այլևս հնարավոր չէր հավատարիմ մնալ նույն այդ միաբանության շուրջ ստեղծված պայմաններուն մեջ: Ավելին, Անտոնյաններեն բաժնված ատեն ալ, իրմե բան մը կթողուր դեռ հոն, որ իր հետ ալ անկե բան մը կտաներ՝ հին օրերու հիշատակները:

Անտոնյաններեն իր բաժանման մասին կգրե նաև այլուր, թե «Հայոց Պատրիարքարան չգացած երեք ընդարձակ թուղթերով հրաժեշտի ողջույնը ուղղած էր Անտոնյան միաբանության, պարզելով իրաց վիճակը, յուր զգացումները և յուր նպատակը, և միանգամայն առաջարկած էր յուր վարած պաշտոնները փոխանցել և հանձնել ելմտական հաշիվները, սակայն այնչափ սիրով կատարված էր բաժանումը, որ միաբանությունը շարունակեց անոր ձեռքը թողուլ յուր ելմտական գործերը մինչև Կոստանդնուպոլիսեն [Կարին] մեկնելուն օրը»<sup>31</sup>:

Օրմանյան երբ կգառնար Հոռոմի փարուխեն, դառն հուշեր միայն կձգեր ետին: Միակ քաղցր հիշատակները, որոնք դեռ կմնային իր ներսը և պիտի համենային դեռ երկար, իր անցուցած տարիներուն մասին էին Անտոնյան միաբանության ծոցին մեջ: Հոն էր ուսում ստացեր ու հոն սորվեր մաթառիկ հանուն ազգային ավանդություններու, այնտեղ էր ծառացեր Վատիկանի դեմ ու այնտեղեն եկեր Հայ Եկեղեցվո գիրկը: Անոր ծոցը կմնային դեռ շատերը իր պայքարի ընկերներեն, որոնք միևնույն հոգեկան խռովքներն ունեցեր էին, թեև չէին կրցեր իրեն նման քաջ մնալ վերջնական քայլն առած ատեն:

\*\*\*

Կփակվի Օրմանյանի ալեկոծ կյանքին առաջին շրջանը, — այն, որ անցուց օտար փարախի մեջ, հայ ժողովուրդի գիրկը դառնալի առաջ, այսինքն մանկության, պատանեկության և առաջին կրիտասարդության շրջանը:

Երբ ոտքերեն օտար փողին կթոթվեր իր ժողովուրդին դառնալու համար, Օրմանյան ետին կթողուր արդեն ճիգերով ու պայքարներով հարուստ շրջան մը, մինչ հագվի 38 տարեկան էր դեռ: Ծիշտ է, այդ տարիներուն կեսեն ավելին իր պատրաստության տարիներն էին. բայց այդ տարիներն իսկ վկանեն եղան բացառիկ տքնության մը, զոր համար կառնե մարդ դեր կատարելու համար վաղվան կյանքին մեջ, և որ Օրմանյանը բարձրացուց իր շրջապատեն վիճ, զայն օժտելով ձիրքերով, որոնք բացառիկ պիտի ընեին այդ դերը:

Մնացյալ տարիները ճիգերու և մաքառումներու տարիներ եղան, երբ երիտասարդ Օրմանյանը ոգի ի բոլին տքնեցավ հայ ոգին կենդանի և անվթար պահելու համար իր համայնքի ծոցին մեջ, ու չվարանեցավ բուռն կերպով մաքառիլ ալ բոլոր այն փորձերուն դեմ, որոնք կըլլային այդ ոգին մեռցրնելու համար կաթոլիկ հայ համայնքեն ներս, և քաջութիւնն ունեցավ պայքար բանալու Վատիկանի դեմ իսկ, որպեսզի ամլության մատեն անոր սանդղանքները՝ բուրովին լատինացնելու համար կաթոլիկ հայությունը և հայ շունչը իսպառ ջնջելու համար անոր մեջ:

Եվ վերջապես տքնության և պայքարի այս տարիներուն էր, որ Օրմանյանի մեջ հառաջ եկավ մեծ բեկումը, իրեն հետևանք այն մոլորանքներուն, զորս կպոներ Հոռոմի վարդապետության մեջ, և այն դավերուն, որոնց կգիջաներ Վատիկան՝ հայության մեկ մասնիկը ուծացնելու համար իր ազգային ավանդություններն:

Ազկե դեպի դարձր Հայ Եկեղեցին՝ քայլ մըն էր միայն: Այնպես որ Օրմանյան այդ քայլն առավ պաղարյուն ու խաղաղ խըղձմըտանքով, հայ ժողովուրդին գիրկը գալու և անոր ի սպաս դնելու համար իր պաշարն ու տքնությունը, իր կորովեն անոր բաժին հանելու, ուսուցանելու ինչ որ ամբարած էր:

Օրմանյան հայ կյանքեն կմտներ ներս անոր ծառայելու ուխտով:

(Շարունակելի)

<sup>30</sup> «Խոհք և խոսք», էջ 104:

<sup>31</sup> «Ազգապատում», 9, էջ 4360—4361: